



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

U⁹unnetue⁹ U⁹

6062

Zungyungtue⁹

891.99
U-62

U. Anp⁹
1853

2011

2003

ՀԱՅԿԵՐՔԱՆԵՐ

287



Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՐԵՊԵՆԵՑ

891.99
U-62

10

Printed in Turkey

Handwritten signature

Printed in France

Printed in Turkey

ՀԱՅԿԱԶՆԵԱՅՍ

ՎԱՍՆ ԼԻՆԵԼՈՅ Ի ՍՄԱ ԱՂԵՐՍԱԽԱՌՆ
ԲՈՂՈՔ ՅԵՐԵՍԱՅ ՀԵՍՏԵԼՈՅ
ԱՌ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՐՍ ԵՒ ԱԶԳԱՍԷՐ
ԻՇԽԱՆՍ ՀԱՅԿԱԶՆԵԱՅՍ


ՅՅԻ-ՅՅ



Ա- ԵԶ


ՅՕՐԻՆԵԱԼ

ՅԱՆՏՕՆԵԱՆ ՅԱԻԵՏԻՍԷ
Ի ՆԱԽԿԻՆ ԳՐԱԳԻՐԷ ԱԶԳԱՅԻՆ
ՍԸՆՏՈՒԿԻ ՀԱՅՈՑ



ՀՐԱՄԱՆԱԻ

ՎԵՀԱՓԱՌ ՊԱՏՐԻԱՐԳԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ
Տ. ՅԱԿՈԲԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԱՊԵԱՆՅ

ՄՈՒՍՏԱՖԱ ՓԱՇԱ ԽԱՆԸ
ՉԱՔՄԱՔՃԸԼԱՐ ԵՕՔՈՒՇԻ

42409-4.2

СЕРТИФИКАТ

Этот сертификат выдан в соответствии с требованиями стандарта
ГОСТ 10177-77 на изделия из стали, изготовленные в соответствии с
техническими условиями завода-изготовителя.

ИЗДЕЛИЕ

Шпилька с резьбой М 10х1,5

Изготовитель: ООО "Машинная обработка"

Город: Москва

ПРИМЕЧАНИЕ

Изделие изготовлено из стали марки Ст 3

в соответствии с требованиями стандарта



№ 19-1109 2

Printed in Turkey


ՅԵՌԵՆԱՅԻՆ ԳՐԱՆՈՒԹՅԱՆ

Թեպէտ լի է Ազգ մեր զանազան մատենիւք
Աստուածաբան Հարց մերոց , որք առ այսոքիւք
հնոց ե՛ն առ պատրուկիւ , կամ մարգարիտ առ
աւլնեօք : Բայց այսու չափով իմն դողցե՛ս չա-
փել կամեցեալ զմեծութիւն նոցա և զսորութ-
իւն այսպիսեաց , ձեռն արկի տաղաչափական
ոճիւ յօրինել զայս փոքրիկ տետրակ ընդ դէմ
նախաստի բանից ազգասեցաց . ո՛չ հայեցեալ
երբէք ՚ի խարխուլ մակոյկ անձինս , և ո՛չ յայս
համաձաւալ Ռվկիանոս . Թէ և դիպայ հողմու-
ռոյց ալեաց՝ անհասանելեաց ասեմ իմոցս կար-
եաց՝ օժանդակութեամբ յիշատակելոցս պրո-
ծեալ հասի ՚ի հանգիտ , բայց ո՛չ ազատ յաղար-
տանաց և յաղաւաղաց ՚ի սմա բացայայտ երե-
ւելոց . որոց ներողամիտ հանդիսանալ ինդրեմ
բառ բնածին հոգեւէր բարուց ձերոց առ ՚ի մը-
խիթարութիւն ծերունւոյս , որ եմ

Նոստրոս Ժառանգ

Աւետիս Անպօճեւան :

Աղաչեմ զձեզ եղբայրք՝ զիտեւ զայնպիսին , որ
հերձուածս և գայթակղութիւնս առնիցեն արտաքոյ
վարդապետութեանն՝ զոր դուքն ուսայք . և խորշե-
ցարնէք 'ի նոցանէ : Հոռվ . Ժզ . 17 :



Ա

Ամենակալ՝ հայր գթութեանց,
 որ յոչնչէ՝ գոյս ածեր.
 զաշխարհ համայն՝ լրիւ իւրով,
 միով բանիւ ստեղծեր.
 եղեր տնտես՝ յեթերս զգօրս,
 յեկեղեցւոջ՝ զքոյղ քարոզ.
 զորս մաղթեմ՝ արթուն պահել,
 զի թշնամին՝ կայ յաւեր :

Բ

Արարչակից՝ բան ծոցածին.
 ՚ի խաւարէ՝ լոյս ածեր,
 քո կամաւոր՝ չարչարանօք.
 զգերեալ հոգիս՝ փրկեցեր,
 զորս վերստին՝ կայ կործանել.
 հին թշնամին՝ վատշուէր,
 եկ տէր Յիսուս՝ հայր զգլուխ,
 որպէս ՚ի ջուրս՝ ջաղխեցեր :

Գ

Անդանարար՝ ով սուրբ Հոգի,
 նախ քան զաշխարհ՝ յայց ելեր.
 իջեր ՚ի ջուրս՝ Յորդանանու,
 Դա է Արդի՝ ձայնեցեր.
 այժմ ալիք՝ բազմակոհակ,
 մի զմիով՝ ելլեել.
 լցո՛ զմեզ՝ քո շնորհօք,
 զի նաւեսցուք՝ անվեհեր :

Դ

Մենորհնեալ՝ մայր անարատ,
 Բազմեալ յաջոյ՝ տերուհեան.
 որ անթարթափ՝ կաս ՚ի զննին,
 ՚ի հողեղէն՝ ազգ մարդկան.
 հատաւ հատաւ՝ յայս հարսանիս,
 ուրախարար՝ մեր գինին.
 յիշո՛ մաղթեմք՝ քո միածնիդ,
 պարգևեսցէ՝ դարձեալ զայն :

Ե

Ննեակ դասուք՝ փառազարդեալք.
 փառաբանիչք՝ տէրութեան,
 որ կայք յաթոռ՝ յաստուածութեան.
 բարեխօսել՝ ընդ մարդկան,
 արդ արուսեակն՝ այն թոթափեալ.
 կաշկանդեալ է՝ մեր զօձուց,
 հասէք փրկել՝ որք սպասէք.
 մահկանացուաց՝ փրկութեան :

Զ

Չայն բարբառոյ՝ յանապատի,
 մեծ ՚ի ծնունդս՝ կանանց.
 տապար դ՛ ի՛ յանպտուղ ծառ,
 քարոզեցեր՝ ժանտ անձանց.
 է՛ իրաւամբ՝ թէ կտրիցիմք,
 անապաշխարս ՚ի մեղաց.
 այլ քոյդ խնամ՝ երբ յայց ելցէ,
 դարձեալ լինիմք լուսազգեաց :

Է

Նախ սարկաւազ՝ նախ մարտիրոս,
նախ ՚ի վկայս՝ նախ յերկինս .
որ բաց ՚ի բաց՝ աչօք տեսեր .
՚ի քարկոծիլ՝ քո ուժգինս ,
եկեղեցիք՝ քրիստոնէից ,
հեղմամբ արեանդ՝ կառուցան .
այժմ քակտին՝ ատելութեամբ .
վանեա՛ ՚ի բաց՝ զատելիս :

Ը

Ատուած ընտիր՝ Ատուած ամերձք ,
Ատուած ախօսք՝ սուրբ գումարք
ընդ ամենայն՝ երկիր ելին ,
կենդանարար՝ ձեր բարբառք .
արդ բանաարկուին՝ կամագիւտ լեալ ,
կամք խռովեալ՝ իբրև ծով ,
նորոգեցէ՛ք՝ զազգիս մեր սէր ,
դադարեացին՝ այս կոհակք :

Թ

Հայաստանեայց՝ հանուրց ազգիս ,
լուսաւորիչք՝ մեր նախկին .
Բարդուղիմէ՛ և Դաթէոս ,
ընտիր քարոզք՝ արարչին .
չև հաւատալ՝ օտար ազգաց ,
հաւատացաք՝ ձեօք ՚ի Տէր ,
հասէ՛ք վրկել՝ ՚ի զրպարտչաց ,
զի խածատեն՝ զմեզ ուժգինս :

Ժ

Բազմաչարչար՝ մեծ նահատակ,
 Գրիգորիոս՝ սուրբ հայր մեր,
 ՚ի խաւարէ՛ կռապաշտութեան,
 ամեր ՚ի լոյս՝ անստուեր.
 Թէպէտ պաշտեմք՝ զտէր Աստուած,
 այլ կագեմք միշտ՝ ընդ եղբայր,
 Թէ ոչ հասցես՝ մեզ ՚ի թիկունս,
 դերեանան՝ վաստակ ձեր:

ԺԱ

Ղու նոր Մովսէս՝ ցուցար ազգիս,
 Արստակէս՝ սուրբ հայր մեր.
 բերելովքո՛ զհանդանակն,
 ՚ի Նիկիոյ՝ յաշխարհ մեր.
 այժմ ո՛ւստի՝ հերետիկոս,
 ասեն զմէնջ՝ անամօթք.
 լեր աջակից՝ քո ազգայնոց,
 զի բաց ՚ի քէն՝ ո՛ մեզ տէր:

ԺԲ

Համանրման՝ հարազատիդ,
 հովիւ ընտրեալ՝ Աստուծոյ.
 սուրբ հայրապետ՝ ըդ Արդանէս,
 յետ Մովսիսի՝ նոր Յեսու.
 դու ամեր զմեզ՝ յերկիր բերրի,
 յեկեղեցին՝ ասեմ սուրբ.
 զնա մոլար՝ կոչեն մոլարք,
 ցրուեա՛ զնոսա՛ յանու՛ն քո:

ԺԳ

Ի բարեբեր՝ յայգեստանէ,
 ողկոյզ ազնիւ՝ Գրիգորիս.
 'ի խակակուլթ՝ տիս հասակիդ,
 ընթադրեցար՝ վասն ազգիս.
 զնոյր կրեմք՝ մեք հաւաստի.
 ո՛չ Աաղուանից՝ այլ 'ի մերոց,
 փուլթա՛ տէր իմ՝ արագ արագ,
 համբարել զքոյդ՝ արգասիս:

ԺԵ

Ո՛վ սուրբ Յուսիկ՝ աչալուրջ դէտ,
 եկեղեցւոյս՝ ընդհանուր,
 որ տքնեցար՝ անքուն ակամբ,
 պահել զնա՝ միշտ մաքուր.
 այժմ ոմանք՝ իբր զՏիրան,
 'ի շահ անձանց՝ հերքեն զայն.
 աճապարեա՛ն էջ 'ի տաճար,
 եւ անկ յերկիք՝ առ աթուռ:

ԺԵ

Սեճդ Ներսէս՝ ջահ լուսատու,
 Հայաստանեայցս համօրէն,
 աղօթեցեր՝ առ հայր յերկինս,
 պահել զազգ քո՝ 'ի չարէն.
 այժմ թէպէտ՝ չիք սուր եւ մահ,
 ազատ եմք մեք՝ յերկիւղէ.
 այլ ազգ յազգի՝ կամք 'ի կռիւ,
 եկ ազատեա՛ն յորոսգէն:

ԺԶ

Սուրբ Իսահակ՝ արթուն հովիւ,
հովուապետին՝ Յիսուսի.
մակաղեցեր՝ զազգս Հայոց,
միշտ ՚ի վարախ՝ դալարի.
այժմ վարձկանք՝ օտար ազգաց,
զհետ են քոյդ՝ ոչխարաց.
մի տար լինիլ՝ գազանակուր,
քանզի քո են՝ վաղեմի:

ԺԷ

Սվ սուրբ Յակոբ՝ լուսաշաւիղ,
բժիշկ հոգւոց՝ հիւանդաց.
քել ողջացան՝ հիւանդք բազումք,
մեռեալն անգամ՝ իսկ եկաց.
մերձ են ՚ի մահ՝ քո ազգակից,
երբ քո գալուստ՝ ՚ի բուժել,
գոնէ յայտի՝ արա՛ մաղթեմք,
զայս Մանածիհր՝ արտալած:

ԺԸ

Սուրբդ Ներսէս՝ շնորհալի,
քնար հոգւոյն՝ տասնաղի.
եկեղացիք՝ Հայաստանեայց,
սրբասացիւք՝ քո հրճուի.
ո՛ւր այն դրի՛չ՝ քո հոգեգլիւ,
յոր միացան՝ Յոյնք ընդ Հայք.
ո՛չ գաս զսպել՝ զմեզ յիրերաց.
դեռ յա՛րիցեմք՝ ազգ յազգի:

ԺԹ

Օ ուարթանուն՝ արիւի պայծառ ,
 'ի Նարեկեան՝ մենաստան .
 դու նոր Մովսէս՝ ցուցար ազգիդ ,
 պարգևելով՝ քոյդ մատեան .
 զայն զոր տեսեր՝ զՅիսուս տէր մեր ,
 'ի գիրկս մօր՝ 'ի յառ տէր .
 մաղթեա ընդ մեզ՝ անհետ առնել ,
 զազգէս մերմէ՝ զորումն այն :

Ի

Մ ազգափող՝ փող ազդարար ,
 սուրբդ Ներսէս լամբրոնեան .
 որ քո բանիւք՝ կարկեցուցեր ,
 զթշնամեաց մեր բերան .
 այժմ յարեան՝ յայն չար ոստոց ,
 չարաճճիք՝ արք դաժան .
 հար կրկնակի՝ քո սուրբ աջով ,
 պապանձեցի՛ յաւիտեան :

ԻԱ

Մ ստուածարեալ՝ սուրբ հայրապետ ,
 մեծդ Օհան՝ Օճնեցի .
 ո՛ւր քո գրիչ՝ հզօր ազդու ,
 վասն ազգիդ՝ սիրելի .
 եկ մի անգամ՝ տես դու յայս վայր ,
 քանի՞ օճք իժք՝ խայթեն զմեզ ,
 բաբէ այտի՛ ցոյց զպատկեր քո ,
 զի ողջասցուք՝ մեք յաստի :

ԻԲ

Անուանակից՝ սրբոյ վեհիս,
Մանդակունի՝ սուրբ հայր մեր.
Դու լցուցեր՝ զեկեղեցիս,
պէսպէս բանիւք՝ շահաբեր.
այժմ հերձուածք՝ յարեան ՚ի մէնջ,
մոլար կոչեն՝ զայն տաճար.
քարամբ պարսից՝ հերքեա՛ զսոսա,
մինչև յանդունդս՝ միշտ անել:

ԻԳ

Անուամբ արդեամբ՝ Գիւտ պատուական,
սուրբ հայրապետ՝ մեր արհի.
քև գտաք մեք՝ զդուռն կենաց,
եկեղեցւոյն՝ Բրիտոսի.
այժմ ոմանք՝ հետտեալք ՚ի մէնջ,
մոլորեցան՝ յայլ դաւիթ.
Թո՛ղ յարապատ՝ զիննուսու զինն,
լեր միայնոյն՝ զկնի:

ԻԴ

Աքանչեւիդ՝ յիմաստութեան,
սուրբ հայրապետ՝ ըդ Յօհաննէս.
որ տանջեցար՝ ՚ի Յուսուփայ,
առ ՚ի փրկել՝ դու զմեղ.
այժմ զի՛արդ՝ կաս ՚ի զննին,
չարչարանաց՝ ազգայնոց.
որք ճենճերին՝ յայլասեսից,
որպէս ոչխար՝ ողջակէզ:

ԻԵ

Նաշխարհիկ՝ վարուք բարուք,
սուրբ հայրապետդ՝ ըդ Մաշտոց.
հիացուցեր՝ օրհներդ ու թեամբ,
զերկնային զօրս՝ անմարմնոց.
նա՛ որ երգեմք՝ միշտ զերդս ձեր,
զի՞ բամբասիմք՝ մոլորեալ.
զգաստացո՛ն՝ զայսոսիկ տէր,
գուցէ անկցին՝ յայսոց ծոց:

ԻԶ

Ո՛ւր ես ո՛հ հայր՝ Գրիգորիս,
վկայասէր՝ պատուարժան.
որ ընկճեցեր՝ զթշնամիս,
եկեղեցւոյս՝ հայաստան.
շատ են մեզ տէր՝ ձայն քո հզօր,
ձայնեաց այտի՛ ՚ի բարձանց.
զի փախիցեն՝ յազգէ քու մմէ,
հակառակորդք՝ ամենայն:

ԻԷ

Սքանչելագործ՝ սուրբ հայրապետ,
մեծդ Պետրոս՝ դետադարձ.
որ ՚ի ձեռն՝ քո հրաշից,
յարգի ազգ քո՛ ՚ի յունաց.
դու որ յօրհնել՝ զջուր գետոյն,
արգիլեցեր՝ զյորձանս,
արգել զհեղեղ՝ պղտորութեան,
խորթացելոց՝ մեր եղբարց:

ԻԸ

Յամպոյ հոգւոյն՝ հեղեալ անձրև ,
 Սուրբ հայրապետդ՝ Մարութայ .
 քե ուողեալ՝ նորաստեղծան ,
 ոստք և ուղեչք՝ թորգոմայ .
 'ի մերձենալ՝ քո 'ի քո վայր .
 իսկոյն կորեաւ՝ այսն չար ,
 մերձ լեր առ մեզ՝ գուցէ աստ կան ,
 զի տառապիմք՝ անխնայ :

ԻԹ

Սուսափայլեալ՝ իմաստութեամբ ,
 սուրբ հայրապետդ Մելիտոս .
 որ անաչառ՝ ձախէիր միշտ ,
 զհերետիկոսս՝ չարայոյզ .
 տեսնօր զոմն՝ յազգէս հայոց ,
 որ շրջեցար՝ 'ի սփիւռ .
 հապա զիարդ՝ յօղեն չար չարք ,
 էկ հա՛ր զսոցին՝ զատամուռս :

Լ

Ռազմաչարչար՝ հայրապետին ,
 արիւնակից՝ խաչակից .
 Աթանագինէ՝ սուրբ հայրապետ ,
 կռոց բազնեաց՝ կործանիչ .
 որ զհրդեհ՝ սուրբ տաճարին ,
 սքանչելեօք՝ շիջուցեր .
 շիջո՞ զքոց՝ ապստամբաց .
 եկեղեցւոյս՝ քայքայիչ :

ԼԱ

Մըքայութեան՝ երկնից դպիր,
սուրբ հայրապետդ՝ Բարսուժայ.
քո կենարար՝ քարոզութեամբ,
նորաստեղծաւ՝ Եդեսիա.
են յազգս մեր՝ արք անխրատք,
որք սիրեն զմէզ՝ քան զլոյս.
բայց բարերար՝ զմիտս սոցա,
զի մի մնասցեն՝ անզգայ :

ԼԲ

Նախապսակ՝ եպիսկոպոս,
ընտրեալ հովիւ՝ սուրբ Ադդէ.
որոշեցար՝ յաւետարան,
յառաքելոյն՝ Թադէէ.
դու որ տանջեար՝ ՚ի զաւակէն,
տանջիմք և մեք՝ մեր յեղբարց.
բարեխօսեա՛ն՝ վասն ազգիդ,
փրկել զմեզ՝ յայսմանէ :

ԼԳ

Հաւատարիմ՝ արթուն տնտես,
տանն Աստուծոյ՝ սուրբդ Խաղ,
որ շահէիր՝ զմերագնեայս,
բանիւք արդեամբ՝ քո առատ.
հետեալք ՚ի մէնջ՝ տիրադրութք,
որպէս Մաղքոս՝ ապտակեն.
չորացո՛ տէր զձեռս սոցա,
զի կոծեսցին՝ յուսահատ :

ԼԳ

Սուրբ Մեսրոպ հոգւոյն գրիչ,
 պատճառ ազգիս՝ փրկութեան.
 քեռւն ճայան՝ դօսացեալ ոստք,
 հաց սուրբ գտան՝ ՚ի սեղան.
 արդ վերստին՝ մարախ և որդն,
 զեղան զեռան՝ ՚ի քո անդ.
 երբ իցէ մեզ՝ տեսանել զօր,
 քոյդ տենչալի՝ գալստեան :

ԼԵ

Նստուածային՝ պատուիրանաց,
 քաղցրաքնար՝ սուրբ Մամբրէ.
 որ հոգեշարժ՝ ամոք բանիւք,
 շարժես զսիրտ՝ քան զորվի.
 այժմ օտար՝ ճայն դառնալուր,
 ճոյնեն առ մեզ ազգատեացք.
 հար քնարիւք՝ զգագաթ սոցին,
 զի չամաչեն յումեքէ :

ԼԶ

Նախընտրեալ՝ սուրբ թարգմանչաց,
 առոյգ կորիւն՝ հայր Աորիւն.
 քո ճիրանօք՝ յօշոտեցան,
 հերետիկոսք՝ կենդանւոյն.
 են որք հերքեն՝ զիւրեանց կրօն,
 վերապատուեն՝ զայլ կրօն.
 ճմլեա՛ զոսա՝ հզօր բռամբ,
 զի յօշեսցին՝ նոյն ընդ նոյն :

ԼԵ

Հայաստանեայց՝ անդաստանաց,
անխոնջ եզնիկ՝ հայր Եզնիկ.
լուսակայլակ՝ քոյին քրտամբ,
զեղան ազգիս՝ արմտիք.
իսկ որք հերձան՝ մնացին տտիպք,
յորս բնաւ՝ չիք հասուն.
երբ տէր գայցէ՝ ՚ի հունձս իւր,
ունին այրիլ՝ իսկ և իսկ :

ԼԸ

Սրհոր ջրոյ՝ կենդանութեան,
սուրբդ Ղազար Պարփեցի.
որ զազաքեալ՝ ծարաւ ազգիս,
զովացուցեր՝ լիուլի.
հետեալք ՚ի մէնջ՝ կան յանջրդի,
ունին խնդրել՝ ՚ի քէն տէր,
մի գթասցիս՝ բնաւ երբէք,
թէ և խնդրեն՝ զկաթիլ մի :

ԼԹ

ՄՎ սուրբ Մովսէս՝ խորենացի,
վաւերական՝ պատմաբան.
որ ՚ի կազել՝ նախնեաց մերոց,
ողբացեր անդ՝ զՀայաստան,
էկ արդ որբա՛ն՝ դու զազգս քո,
որք կազեն միշտ՝ վասն սյլոց.
և տո՛ւր շնորհ իմաստութեան,
զի եղիցին միաբան :

Խ

Համանման՝ հօրս մերոյ,
սուրբ հայրապետ՝ Եղիշէ.
'ի ճանաչել՝ զերախտիս հարց,
պատմագրեցեր՝ Ազկերտէ.
վայ այնոցիկ՝ որք զլացան,
և դիմեցին՝ յօտար գիրկ.
'ի փառս անուան՝ սուրբ Վարդանեանց,
դարձն զսոսա՝ յայնմանէ:

ԽԱ

Համավաստակ՝ երանելեաց,
Գաւիթ անյաղթ՝ մեր սուրբ հայր.
յուսուցանել՝ քո ազգայնոց,
ուսար զլեզուս՝ այլեայլ.
յարեան 'ի մէնջ՝ նոր խրայել,
որք ոչ ծանեան՝ զիւրեանց տէր.
նա՝ մինչև ցարդ՝ 'ի ձեր գրոց,
հանեն զգրեանս՝ յանուն յայլ:

ԽԲ

Իշխանազուն՝ քաջ հռետոր,
մեծ Գրիգոր՝ Մագիստրոս.
բժացուցեր ազգու գրչաւ,
զոխերիմաց՝ զլեզուս.
ան դու կրկին՝ զայն որպէս տէգ,
լեր միջամուխ՝ ընդ ազգիդ.
զի զղջացին՝ յիւրոց չարեաց,
եւ մի լիցին՝ չարտիսոս:

ԽԳ

Ապիսկոպոս՝ Չորափորոյ,
 սուրբդ Սահակ՝ հայր բարի.
 մեծ արար տէր՝ զօր վախճանիդ,
 քան զկենացդ՝ տարփալի.
 եթէ Ոգբայ՝ առ կատարեաց,
 յանշուէն աջոյդ՝ զքոյդ խնդիր.
 ոչ կատարէ՝ Արարիչ մեր,
 զոր ինչ խնդրես մեր ազգիւ

ԽԴ

Անձեացեաց՝ Եպիսկոպոս,
 հովիւ բարի՝ տէր Խոսրով.
 որ զխորհուրդ՝ եկեղեցւոյ,
 կարգադրեցեր՝ սուրբ հոգւով.
 նա՛ որք կերին՝ զհաց քո ընդ մեզ,
 յարեցան այժմ՝ յօտար ազգ.
 դարձն զնոսա՛ առ հօտս քո,
 մի մնացեն՝ միշտ ՚ի սուլ:

ԽԵ

Ասխանձաւոր՝ սուրբ օրինաց,
 նոր Եղիա՛ սուրբ Աբգայ.
 որ շիջուցեր՝ զՊիւռիոն,
 քո հաւատովք՝ աներկբայ.
 նոր Պիւռիոն՝ կայ յազգս մեր,
 զորս արժարժեն՝ օտար ազգ.
 շիջն՝ զսա՛ դու փոյլթ ընդ փոյլթ,
 զի քո եմք մեք՝ այժմ յապար

ԽԶ

Մտե՛փաննոս՝ Եպիսկոպոս,
 պարիսպ ազգիս՝ ամբակուռ.
 զքեզ յորոշել՝ յազգէ քու մէ,
 չեղև կարող՝ Նանկիթամուր.
 այժմ ոմանք՝ ՚ի քոյայնոց,
 որոշեցան խաբկանօք.
 Եկ միացո՛ւ դու վերստին,
 քանզի տքնին՝ զուր ՚ի զուրս

ԽԷ

Օ սքարիսա՛ կաթողիկոս,
 Ազթամարայ՝ սրբոյ տան.
 որ ՚ի պահել՝ զօգիս յայժեաց,
 վաստակեցար՝ անխաբան.
 նչ թէ ջաֆար՝ և Նանկիթամուր,
 նեղեն զազգ քո՝ իբրև զքեզ.
 այլ ձեռք եղբարց՝ են քարաձիգ,
 փրկիչ ազգիս՝ դու միայն:

ԽԸ

Եպիսկոպոս ըրք Բասենոյ,
 սուրբդ Թաթիկ՝ հովիւ քաջ.
 որ ըստ բանին՝ կենարարի,
 մեռար սակս՝ ոչխարաց.
 են աստ ոմանք՝ որք խարբալին,
 իբրև զցորեան՝ զազգն քո.
 սաս՛ցնա՛ երթ զհետ իմ,
 զի ընթացուք՝ քաջալանջ

ԽԹ

Խառտովանող՝ Եպիսկոպոս,
 սուրբ Մելիտոս՝ հայր ազնիւ.
 որ ՚ի կարգաց՝ զինուորութեանց,
 ետ տէր զքեզ՝ մեզ հովիւ.
 մեք զհետ եմք՝ քոյոյ ձայնի,
 են որք ետուն՝ հրաժեշտ.
 դարձո՛ զնոսա՝ ՚ի յուղղութիւն.
 զի տգէտք են՝ ստուգիւ :


Ծ

Հրաշափառ՝ ընտիր սուրբ հայր,
 Ստեփաննոս՝ Ռւննեցի.
 որ ՚ի կրօն՝ սուրբ գիտութեան,
 ածեր լրիւ՝ դու զՌւնի.
 զքեզ մատնեցին՝ հովիւք դաժանք,
 զմեզ մատնեն՝ վարձկանք սուտք.
 մինչև յերբ տէր՝ ջեւանես յայց,
 դեռ կազիցեմք՝ ազգ յազգի :

ԾԱ

Ստեփաննոս՝ Եպիսկոպոս,
 Սիւնեաց Երկրին՝ մահարձան.
 նախանձաւոր՝ լեալ օրինաց,
 սուրբ ամյորդւոյն՝ համանման.
 ոչ պոռնկին թելադրութեամբ,
 վշտանամք մեք՝ որպէս դոքա
 այլ ՚ի հետտելոց՝ ցաւել տալիսք,
 հաս ՚ի թիկունս՝ միւ պաշտօնան :

26011-6



ԺԲ

Նկեղեցւոյն՝ ուղղափառաց,
 'ի տեառնէ մեզ ընծայ.
 պատարագիչ՝ և պատարագ,
 սուրբդ Սահակ՝ քահանայ.
 Եկ զհետ լեր՝ ընդ քո ազգիդ,
 նոր Վաղէսից մերայնոց.
 զի մի գուցէ՝ ճարակեսցի,
 խորհուրդք նոցին՝ անուղղայ:

ԺԳ

Օղևիթ երէց՝ Արտաշատու,
 հովիւ ընտիր՝ տիրազգեսաց.
 որ անկորուստ՝ պահել զազգ քո,
 գերեցար իսկ՝ ընդ գերեաց.
 ոչ թէ Հապուհ՝ չարչարէ զմեզ,
 յուրացութիւն՝ ամել զմեզ.
 այլ անառակ՝ հետտեալք 'ի մէնջ,
 արի վրկեան՝ յայս չարաց:

ԺԴ

Համապատիւ՝ Մելքիսէթի,
 սուրբ քահանայդ՝ Դանիէլ.
 որ 'ի հեղումն՝ արեան վեհին,
 ետուր՝ զկեանս՝ քո նուէր.
 արդ՝ մոռանցիս՝ զհայկազեանս,
 որք խոշտանգին՝ աստ պէսպէս.
 բարէ մաղթեան՝ առ տէր Աստուած,
 զի մարտիցուք՝ անվեհեր:

ՃԵ

Սպիտականիչ՝ մայքուր արեօք,
երանելիք՝ երեքին.
Անփսիմէ՝ Յովսէփ երէց,
Այիթալայ՝ հայկազինք.
հասականից՝ եմ ձեզ ո՛ հարք,
բայց չեմ լուեալ՝ այսպէս չար.
զոր վասն ազգիս՝ նիւթեն ոմանք,
հասէք հարէք՝ դուք ուժգին :

ՃԶ

Մնամարմնականդ՝ ՚ի մարմնականս,
սուրբդ Դաւիթ՝ հայր բարի.
քո տապանաւ՝ ստացաք զգանձ.
զԱպարանից՝ փայտ խաչի,
եթէ Վասիլ՝ և Ասատանդին,
էին զարդիս՝ ընդ ազգիս.
պապանձէին՝ ազգատեացք մեր,
աղէ դու հար՝ զգետնի :

ՃԷ

Նախանձելիդ՝ համայն ազանց,
երանելիդ՝ սուրբ Մակար.
որ առ ուղիդ՝ սուրբ հաւատոյ,
տօնիս գաւառ՝ յայլեայլ.
ով կօւրութեան՝ խորթացելոց,
որք չամաչեն՝ զիւրսն ատել,
բարէ դու լեր՝ քո ազգայնոց,
իրաւադատ՝ դատարար :

ԾԸ

Աքանչացաւ՝ մեծն Հռոմիմ,
 ընդ քո շնորհ՝ հայր Սիմէոն.
 'ի բացատրել՝ ողջմտութեամբ,
 զՀայաստանեայց՝ սուրբ կրօն.
 ուր գահակալն՝ բենեփիտոս,
 որ ձախեսցէ՝ զոսոխս մեր.
 ուր էր լինել՝ տանջիլ սոցա,
 որպէս կղերն՝ միւսնոյն :

ԾԹ

Եայնածաւալ՝ երկրին Հայոց,
 մինդ արեգակ՝ մինդ լուսին.
 սուրբդ Անտօն՝ Արօնիդէս,
 դաստիարակ լուսածին.
 ձեօք ուսոք մեք՝ զսուրբ խորհուրդ,
 եկեղեցւոյս՝ ուղղափառ.
 արդ սխալեալ՝ դատեն ոմանք,
 ձեր սուրբ հայցմամբ՝ կարկեսցին :

Կ

Երկնահանգէտ՝ հանդիսական,
 սուրբ Մարուգէ՝ հայր մաքուր.
 որ 'ի ձեռն քոց՝ հրաշից,
 հիացուցեր՝ զազգ հանուր.
 յրնտանենալդ՝ ընդ հարց մերոց,
 տեսար լուար՝ զազգէս ինչ.
 հապա սանձեա՛ զկղակս չարաց,
 ողբ նախատեն՝ զուր 'ի զուր :

Մատուածուսոյց՝ պատուիրանաց՝
 քարոզ աշխոյժ՝ սուրբ Եփրեմ,
 որպէս Եզրաս՝ ՚ի հին օրէնս,
 նոյնպէս և դու՝ ՚ի նոր օրէն.
 հակառակին՝ ոմանք ընդ մեզ,
 վասն մերոց՝ կրօնից.
 դանդանաւանդ՝ դիր բերանոց,
 զի քաջ դիտես՝ զմեր զազգէն:

Բազմավաստակ՝ տեսուչ արթուն,
 հայր Շաղիտայ՝ վանական.
 որ ջանացեր՝ սիրաշահել,
 զմիաբանս՝ ամենայն.
 երախտապարտ՝ եմք քո բարեաց,
 և չեմք ուրաստ՝ իբրև զայլս.
 որք զղջացեալ՝ ունին դառնալ,
 բայց չօգտէ զեղջ՝ անադան:

Պաշտօնակից՝ առնս մեծի,
 հայր Եպիփանդ՝ ճգնազգեաց.
 որ ոչ ետուր՝ նինջ և հանդիտ,
 արտեանաց՝ իրանաց.
 ՚ի ձեռն քոյդ՝ անչափ երկանց,
 լցան համբարք՝ մեր ազգիս.
 վայ հետեւոց՝ որք կոճուպին,
 ՚ի դրունս այլոց՝ ծարաւ քաղց:

ԿԴ

Հայաստանեայց՝ վանորէից,
աննինջ տնտեսք՝ Նփրեմ գինա.
ընդելուզեալ՝ ազնիւ ակամբ,
պարզեալ մեզ՝ իբրև զգինա.
ձեօք ցնծամբ մեք՝ որպէս փեսայ,
և ընթանամք՝ իբրև հսկայ.
Թող կոծեսցին՝ օտարացեալք,
ի լաց ՚ի կոծ՝ և ՚ի վիշտ:

ԿԵ

Մնահական՝ խուռնկ խնկելի,
սուրբ քահանայդ՝ տէր Բուրա.
որ ՚ի խարոյկ՝ կրակապաշտից,
բուրեցար դու՝ ՚ի Մեղկայ.
այժմ ազգ քո՝ միշտ խորովի,
նչ ՚ի Պարսից՝ այլ ՚ի միմեանց.
Էկ հայր բարի՝ առ ազգս քո,
և յընկերել, մեզ փուլթա՛ն:

ԿԶ

Մստուածաշէն՝ տաճար մայրուր,
սուրբ սարկաւազ՝ ըդ Շինու.
ի քեզ հաճեալ՝ եկաց Յիսուս.
փոխան արեան՝ քո սրբոյ.
մաղթեա՛ն առ նա՝ դու վասն մեր,
առ ՚ի յօգնել՝ ՚ի ժամուս.
զի որք յարան՝ ընդ օտար ազգ,
Թշնամանեն՝ լու ՚ի լու:

ԿԷ

Հրաշալիդ՝ ՚ի միանձուենս,
 սուրբդ թաթուլ՝ ճգնազգեաց.
 որ ոչ պակաս՝ քան զհայր Անտոն,
 մարտեար տերամբ՝ ընդ դիւաց.
 մարտիր այժմ՝ ընդ նոյն չարին,
 որ թակարթեաց՝ զմերայինս.
 և զսոսա՝ իմաստնացո՛ւ,
 գալ և խառնիլ՝ ընդ եղբարց ։

ԿԸ

Մշակերտեալք՝ յոտս սրբոյս,
 վարոս թումաս՝ հարք ընտիր.
 զոր ինչ ուսայք՝ ՚ի սուրբ հօրէս,
 կատարեցիք՝ անձանձիր.
 կատարեսջիք՝ զայս մեր հայցուած,
 որք մնամք ձեր՝ նպաստից.
 յազատել զմեզ՝ յազգատեցաց,
 որք չեն դադար՝ տալ զոճիր ։

ԿԹ

Սուսապսակ՝ պսակաւոր,
 Բենիամին՝ սարկաւազ.
 որ դասակցեալ՝ լուսեղինաց,
 եղանակես՝ զսուրբ նուազ.
 գիտես արդեօք՝ ո՞ համազգի,
 թէ չէ ազգ քո յանդորրու.
 զի չարչարի՝ ՚ի հերձուածոց,
 հաս յօգնութեան՝ դու արագ ։

Հ

Նոր Ահարոն՝ ցուցար ազգիս,
 սուրբ Աթանաս՝ քահանայ.
 ՚ի քեզ Հոգին՝ էջ սուրբ իւզով,
 և օծ լին՝ աներկբայ.
 այժմ որ կաս՝ բազկատարած,
 ՚ի սրբութիւն՝ սրբութեանց.
 խնդրեմք ՚ի քէն՝ ո՛վ ընտրեալ տէր,
 վասն ազգիդ՝ աղօթեան:

ՀԱ

Հանդիսակցեալ՝ ընդ երկնայնոց,
 առաքինի՝ սուրբ վկայք.
 որք խրատու՝ յիշեալ սուրբ հօր,
 վասն ազգիս՝ զինեցայք.
 զձեզ տանջեաց՝ արքայն Հոնաց,
 զմեզ տանջեն՝ ապաշնորհք.
 արդ տանջեսջիք՝ և դուք զսոսա,
 զի դուք էք մեր՝ յոյս և կեանք:

ՀԲ

Նստեղազարդ՝ իբրև երկինք,
 լուսադուժար՝ սուրբ վկայք.
 որք ՚ի Վաշմայ՝ ՚ի Նախշուան.
 յեկեղեցւոջ՝ այրեցայք.
 այրիմք և մեք՝ ՚ի հեստելոց,
 եկեղեցեօք՝ կրօնիւք.
 աճիւնասցին՝ ՚ի հող լուծցին,
 ձեր սուրբ հայցմամբ՝ Հայկաճնեայք:

29

Անյաղթ վկայդ՝ Գրիառոսի,
 Թէողորոս՝ մարտիրոս.
 սքանչանամք՝ ՚ի քո սուրբ վարս,
 և ՚ի տանջանս՝ կենսխուզ.
 սքանչացաւ՝ և Ռուզնասին,
 յանխախտ հաւատս՝ մեր ազգին.
 յամօթ լիցին՝ ազգատեացք մեր,
 որք չարք խօսին՝ զհաւատոյս:

28

Հրաշատեսիլ՝ քաջ նահատակ,
 Գրիգոր Ռաժիկ՝ սուրբ վկայ.
 յահէ քու մէ՛ սարսեցան դևք,
 և Գենչապուհ՝ ընդ նոսա.
 ո՛ւր քո տեսիլ՝ սյն ահաւոր,
 այժմ ազգիդ՝ չէին պէտք.
 յոր հանգ չէին՝ ՚ի զրպարտաց,
 որք չար նիւթեն՝ անխնայ:

26

Անպարտելի՛ քաջ նահատակ,
 սուրբդ Վահան՝ Գողթնացի.
 ո՛չ ուսուցեր՝ դու երիցւոյն,
 եկեղեցւոյն՝ լինել մի.
 այժմ զի՛արդ՝ հարք վառամուրք,
 բաժանեն զայն՝ հայհոյիւք.
 ըմբերանեա՛ն՝ քոյին շնորհօք,
 զլեզուս նոցա՝ երկսայրի:

ՀԶ

Աբղլմսեհ՝ գառնուկ ազնիւ,
էկ վկայեա՛ վասն մեր.
Դի մկրտիլ՝ քո անդ Դի լերին,
բաց Դի տղայոց՝ զոք տե՛սեր.
բաբէ սաստեա՛ մեր թշնամեաց,
որք մոլորեալ՝ ասեն զմէնջ.
եթէ մոլարք՝ իւ մանկունք մեր,
կարողացան՝ զայն առնել:

ՀԷ

Լրկնահանդէս՝ հրեշտակ յերկրի,
Եւստրատիոս՝ մեծ վկայ.
որ անյողդողդ՝ ելեր յատեան,
յամօթ հարեր՝ զՎիւսիա.
զնոյն արա՛ աստ Դի ժամուս,
մեր ոխերիմ՝ թշնամեաց.
զի ծանիցեն՝ թէ դու ես տէր,
որդւոց թռանց՝ թորդոմայ:

ՀԸ

Փառաւորեալ՝ անմահ փառօք,
Օգսէնտիոս՝ հայր ընտիր.
հիացուցեր՝ չարչարանօք,
զբռնաւորն՝ այսակիր.
մուտ արար արդ՝ հին թշնամին,
Դի հայրենին՝ քո դրախտ,
վանեա զսա՛ զօրութեամբ քով,
զի արկ Դի մեզ՝ զչարս գրդիւ:

ՀԹ

Ինթացակից՝ երանելոյս,
 Եւզինէոս՝ քաջ զինուոր.
 որ լքելով՝ զմարմնաւոր,
 առեր զփառս երկնաւոր.
 ուր բացադաչ՝ քո աղաղակ,
 յոր ապշեցաւ՝ լիւսիւս.
 Իցէ՞ արդեօք՝ երկրորդել զայն,
 զի հանգիցուք՝ մտադիւր:

Ձ

Օ արմանալիդ՝ ՚ի պարս սրբոց,
 Մարդարիոս՝ մարտիրոս.
 որ ՚ի ծածկել՝ զձեղունս տան քո,
 բացեր զհոգւոյդ՝ քո ձեղունս.
 կան արդ՝ ՚ի մեզ՝ կոյրք կամակորք,
 որք դանդաղին՝ ՚ի խաւար.
 Իցէ՞ արդեօք՝ քո շնորհօք,
 շնորհիլ սոցա՝ աչաց լոյս:

ՁԱ

Համապատիւ՝ երջանկացեալ,
 սուրբ վկայիւքս՝ Ուրէստէս.
 որ ՚ի պարծանս՝ եկեղեցւոյ,
 լքեր զփառս՝ զբեհեզ.
 յարեան ոմանիք՝ յազգէ քուամէ,
 հսկառակորդիք՝ նոյն սուրբ տան.
 անձրեացո՝ զքո շնորհս,
 դեռ տարածեալ՝ սյս հրկէզ:

28

Արպէս յերկինս՝ եօթն մուրակ,
նոյնպէս յերկրի՝ դուք եօթնեակ.
որք առ ՚ի կոչ՝ արքայութեան,
խոտաճարակ՝ սնեցայք.
՚ի պաշտպանել՝ զիննակներան վանս,
լաւ վարկաք մահ՝ քան զկեանս.
Օն արիք դուք՝ պահել սուրբ զուխտ,
զի յայս անուն՝ կնքեցայք:

29

Քրիստոսակիր՝ և զինակիր,
սուրբ Յակովիկ՝ ազգախնամ.
՚ի չարչարիլ՝ վասն հաւատոյդ,
լեզուք դահճաց՝ կարկեցան.
օրհնեալ է տէր՝ կորեաւ Վռամ,
այլ կան քսուք՝ ազգատեարք.
դգաստացո՝ կամիս կորո՝
զի հանգիցուք՝ մեք համայն:

29

Դեղեցկանուն՝ քաջ նահատակ,
Աստուածատուր՝ սուրբ վկայ.
որ նշկահեալ ՚ի մազդեզանց,
հաւատացեր՝ աներկբայ.
դու անձկացեալ՝ մեր օրինաց,
չայ անուանել՝ փառս վարկար.
են աստ ոմանք՝ ՚ի հերքել զայն,
հերքեա՛ և դու՝ զնոսա:

26

Մկանակապ՝ զոյդ գինտք մաքուր,
 ով սուրբ խորէն՝ Աբրահամ.
 որք խիզախեալ՝ արշաւեցիք,
 'ի սուր 'ի հուր՝ ինքնակամ.
 ահա՛ հետեալք՝ տանջեն զմեզ,
 որպէս զձեզ՝ Գենշապուհ.
 հասէք փրկել՝ զմեզ յայսցանէ,
 զի յօշոտեն՝ անխնամ:

27

Մրիացեալք՝ արդարութեամբ,
 քառասուն հինգ՝ սուրբ վկայք.
 որք զտաղանդ՝ տեառն շահեալ,
 յուրախութիւնս՝ կոչեցայք.
 ելին 'ի մէնջ՝ արք անառակ,
 որք կան վատնել՝ զժառանգ.
 դարձուցէք տեա՛րք՝ առ հայրենիս,
 դեռ ոչ եղեալ՝ ձեռնունայնք:

28

() Հետ հետոյ՝ վարդապետին,
 ինքնայորդոր՝ հետընթացք.
 սուրբդ Սայէն՝ և Որմզդան,
 հասրտացեալք՝ բազմադանձ.
 դուք որք լքիք՝ վասն հաւատոյ,
 զորդի զկին՝ զինչ զգոյս.
 էր համբերէք՝ խորթացելոյ,
 որք ոչնչեն՝ զօրէնս հարց:

2Ը

Նորաճնեալ՝ որդի լուսոյ,
 սուրբդ Դաւիթ՝ Դուռնեցի .
 որ ՚ի հանդէս՝ սուրբ վկայից,
 առ ընկալար՝ զսուրբ Հոգի .
 դու փորձառեալ՝ զմեր օրինաց,
 Թողեր զօրէնս՝ հայրենեաց .
 են ՚ի մեզ արք՝ որք փոխեցան,
 դարձն զսոսա՝ հայր բարի:

2Թ

Բարեփիճակ՝ ես դու որդւովք,
 Թէոփիլէս՝ մեծ իշխան .
 որ ՚ի տանջել՝ զազգս հայոց,
 բացան հոգւոյդ՝ պատուհան .
 հանդիպեսցին՝ քումդ շնորհաց,
 ապաշնորհք՝ մեր եղբարք .
 որք կուրութեամբ՝ հոգւոյ աչաց,
 զակատին ցարդ՝ որմ զորմայն:

2

Յնձան փառօք՝ նվ Յուզիտայ,
 քե և որդիդ՝ Ախակոս .
 որք յաղցաւոր՝ կենաց հովտէս,
 ելիք իբրև՝ վարդ անփուշ .
 մի մոռասջիք՝ զհայկազնեսոյս,
 որք տատանիսք՝ յայս ծով մեծ .
 նա մանաւանդ՝ ազատեսջիք,
 ՚ի զրպարտչաց՝ քամմնափուշ:

ՂԱ

Գլխաւոր՝ սուրբ արքային,
 սուրբդ Գէորգ՝ քաջազուն.
 զինչ այս եռանդն՝ ի քեզ ուլ տէր,
 ի սէր ազգիդ՝ քո սիրուն.
 ի քէն ուսցին՝ ապաշնորհք,
 զազգասիրին՝ զհաւատ.
 Թէ և Բուղայ՝ խոշտանկեսցէ,
 պարտին հաստատ՝ կալ ի նոյն:

ՂԲ

Սատակարար՝ կենաց հացին,
 սուրբդ Գլակ՝ վանահայր.
 որ զքաղցեալ՝ զազգս հայոց,
 յագեցուցեր՝ անպառ.
 նա՛ որ բազմէր՝ էառ զպատան,
 յուրաստ եկեալ՝ ել արտաքս.
 կոչեա՛ զնա՛ ո՛ հայր բարի,
 դեռ չձկտեալ՝ յայլ ինչ չար:

ՂԳ

Ուսաշաւիղ՝ ճանապարհին,
 ընթացակիցք՝ ընդաբոյս.
 Գոհարինէ՛ և ճամիղոս,
 և Տուքիկոս՝ Ռատիկոս.
 հերձան ի մէնջ՝ հարք խաբեբայք,
 որք կերպանան՝ զԲաւթեան.
 սակայն գործեն՝ զՍաւուղեան,
 եկայք վկայք՝ ի մեր կոյս:

ՂԴ

Ի տեառնէ՛ եղև քեզ այս ,
 ո՛վ Սամուէլ՝ վեհ իշխան .
 որ ընդ սրբոյ՝ մեր Աբգարու ,
 արժանացար՝ սուրբ կոչման .
 հեղմամբ արեանդ՝ զոր հեղ յերկիր ,
 Սանատրուկն՝ ուրացեալ .
 սրբեա՛ զաչս՝ կուրացելոց ,
 որք հարկանեն՝ կոյր զկուրայն :

ՂԵ

Կանխահրաւէր՝ ընտրողութեամբ ,
 հանդիսացար՝ հրաւէր .
 որ յաղջամուրջ՝ խոր վիրապէ ,
 ՚ի վեր ածեր՝ զսուրբ հայր մեր .
 յիշեա՛ նմա՝ ո՛վ տէր Օտայ ,
 զազգիս մերոյ՝ դառն աղէտ .
 զի վշտագնիւք՝ տարապարտուց ,
 յազգատեցաց՝ կարևէր :

ՂԶ

Հազարապետ՝ շնորհաց դանձուց ,
 սուրբդ Գառնիկ՝ ճգնաւոր .
 քև շնորհեցան՝ հայաստանեայց ,
 ընտիր նշխարք՝ մեր սուրբ հօր .
 մաղթեա՛ առ նա՝ վասն ազգիս ,
 պաշտպան լինել՝ յարաժամ .
 զի գողք վարձկանք՝ յաւելան յոյժ ,
 առ ՚ի պատրել՝ զհօտ իւր :

ՂԷ

Սուրբ Միքայէլ՝ քաջ նահատակ,
պարծանք երկրին՝ Գուգարաց.
որ խոյացեալ իբրև զարծուի,
վաղվաղ հասէր՝ անձկալեաց.
ի փառս հեղման՝ քո սուրբ արեան,
մաղթեա՛ առ տէր՝ վասն ազգիս.
փրկել զմեզ՝ ոչ ՚ի Յուսփայ,
այլ յազգատեաց՝ հայհոյչաց:

ՂԸ

Օիրանազգեաց՝ և խաչազգեաց,
Սահակ Յովսէփ՝ վեհ իշխանք.
որք ՚ի պահել՝ զազգ մեր պայծառ,
ի Հարոնէ՝ տանջեցայք.
վայ՛ այնոցիկ՝ որք հեստեցան,
և ձեռնարկեն՝ խաւարել.
խաւարեցին՝ երեսք նոցա,
և փայլեսցին՝ ձեր անուանք:

ՂԹ

Սուրբդ Սահակ՝ և Համազասպ,
իշխանք ազգիս՝ մեծանուն.
որք առ ՚ի սէր՝ սուրբ հաւատոյ,
յաղթող եղէք՝ թշնամւոյն.
է՛ է՛ ՚ի մեզ նոր Մերուժան,
որպէս եղբայր՝ ձեր յայնժամ.
ո՛ւր էր լինիլ՝ մեր համազգեաց,
որպէս յառաջ՝ միւսնոյն:

Ճ

Ղրիգոր իշխան՝ Մամիկոնեան,
 պարծանք ազգիս՝ հայկազեան.
 նոր Մատաթի՛ ցուցար դու մեզ,
 սատակելով՝ զՄերուժան.
 եկ դու զարդիս՝ տես միանգամ,
 որքան ՚ի մեզ՝ Մերուժան.
 դարձն՝ զսոսա՛ յայս մոլութեանց,
 և կամ արա՛ դու կործան:

ՃԱ

Արուլ հոգւոյն՝ սպառազինեալք,
 Գաւիթ Գուրգէն՝ գնուելիք.
 որք անվեհեր՝ ՚ի մահուանէ,
 զհաւատս անբիծ՝ պահեցիք.
 ոչ թէ տանջիմք՝ իբրև զձեզ,
 ՚ի դիցապաշտ՝ Բուղայէ.
 այլ վշտանամք՝ ՚ի հերձուածոց,
 եկայք իրկել՝ ո՛վ արիք:

ՃԲ

Բարեացապարտ քաջ նահատակ,
 պարծանք ազգիս՝ տէր Վարդան.
 հեղմամբ արեան՝ սուրբ վկայիդ.
 արմատացան՝ ոստք հայկեան,
 այժմ ոմանք՝ քանցեալք ՚ի ձէնջ,
 փոխան պտղոյ՝ բերեն փուշ.
 իսլեա՛ զսոսա՛ արմատաքի,
 զի մի լիցին՝ մեզ խաբան:

ՃԶ

Արպէս մարմնով նոյնպէս հոգւով,
 դու հարազատ՝ իսկ եղբայր,
 սուրբ Հմայեակ՝ որով մաքուր,
 յանաստուածից՝ ճենճերեալ
 դու յարևելս՝ մեք յարևմուտս.
 տանջիսք ՚ի սէր հաւատոյ.
 հաս յօգնութիւն՝ ո՞ հայկազուն,
 զի քե ուսաք՝ զԱստուած հայր:

ՃԷ

Վի տէր խորէն՝ խորխորունի,
 խորախորհուրդ՝ խոհական.
 որ գնեցեր՝ անցաւորօք,
 զանանց կեանս՝ անվախճան.
 ուսո՞ մեզ տէր՝ զայն քո շնորհ,
 կարող լինել՝ համբերել.
 զի մարդելոյզ՝ թշնամիք մեր,
 ճախեն զմեզ՝ անխաբան:

ՃԸ

Ի վարդմնեաց՝ Հայաստանեայց,
 վարդ գեղափայլ՝ սուրբ Արտակ.
 որ հեղձուցար՝ ՚ի մէջ փշոց,
 չարչարանաց՝ դժնդակ.
 այժմ որ յերկինս՝ միշտ հոտոտիս,
 հոտոտեսջիր՝ և առ մեզ.
 զի զազրալի՝ հոտ բուրեն մեզ,
 այլակրօ՞ք՝ հարք ոմանք:

ՃԹ

Մակաղացեալ յարօտ փրկչին,
 սուրբ Գարեգին՝ գառն անգին.
 անձնանուէր՝ պատարագեալ,
 նման գառին՝ անմահին.
 մեք որ յարօտ՝ քո մակաղիմք,
 'ի վարձկանաց՝ արտաքսիմք.
 Էկ պաշտպանեա՛ն՝ զքոյին զարօտ,
 և զարածեալս՝ 'ի նմին:

ՃԺ

Մեծահռչակդ՝ յիշխանութեան,
 մեծդ Մոգպետ՝ մազդեզանց.
 զի՛նչ այս շնորհ՝ 'ի քեզ յանկարծ,
 որ ծախէիր՝ գիշախանձ.
 երանելիք՝ էին իսկ իսկ,
 մեր ոխերիմ՝ ազգատեացք,
 թէ լինէին՝ յայնժամ ընդ քեզ,
 ճանաչէին՝ զօրէնս հարց:

ՃԺԱ

Հոգեզինեալ՝ սուրբ զինակիրք,
 պարծանք ազգիս՝ Վարդանեանք.
 որք առ 'ի սէր՝ սուրբ հաւատոյ,
 զոհ պատարագ՝ մատուցայք,
 եթէ Յազկերտ՝ կայ 'ի դժոխս,
 'ի մեզ Վասակ՝ ոչ սակաւ.
 հասէք յօգնել՝ ձեր ազգայնոց,
 զորս արեամք՝ ստացայք:

ՃԺԲ

Ո՛վ տէր Յսվսէլի՛ կաթողիկոս,
 պարագլուխ՝ սուրբ գնդի.
 որ ըստ նախնոյն՝ շեղեր հաւան,
 հրապուրանաց՝ Յազկերտի.
 այժմ որդիք՝ քո հոգեծին,
 թակարթին միշտ՝ յօտարաց.
 աղաւաղե՞ս՝ զքո ձեռակերտ,
 ո՞չ ազատես՝ զմեր զօճիս:

ՃԺԳ

Մնկղիտանամ՝ ո՛վ սուրբ Ղեոնդ,
 զի՞նչ անուանել՝ զքեզ տէր.
 վկայ արդեօք թէ քահանայ,
 թէ պատարագ՝ վասն մեր.
 յանուն քո սուրբ՝ տօնեմք մինչ ցարդ,
 զընկերակիցս՝ քո համայն.
 յանուն քո սուրբ՝ յուսացեալ եմք,
 ո՞չ հասանես՝ զմեզ փրկել:

ՃԺԴ

Հաղորդակից՝ հօրս սրբոյ,
 չարչարանաց՝ և փառաց.
 Աստուածընտիր՝ տէր սուրբ Սահակ,
 եպիսկոպոս՝ Ռըշտունեաց.
 դու մեզ ՚ի հայր՝ մեք քեզ՝ յորդի,
 օտար ազգաց՝ առի՞նչ փոյթ.
 փութա՛ մաղթեմ՝ հովիւ բարի,
 բաժանել զմեզ՝ յիրերաց:

ՃԺԵ

Բնկերակից՝ սրբոց պարուց,
Մուշէ երէց՝ Արծրունւոյ.
գեր քան զնախնին՝ Եղիազար,
մարտեար վասն՝ հաւատոյ.
այժմ զիմրդ՝ չօգնես մեզ տէր,
որք պարսաւիմք՝ տարապարտ.
Թէ ոչ հասցես՝ օժանդակել,
կոխան լինիմք՝ Թշնամւոյ:

ՃԺԶ

Տէր Աբրահամ՝ տէր Սամուէլ,
համակարիք՝ զոյգ տատրակ.
որք յարածոյ՝ գեղջէն Հայոց,
յերկինս ՚ի վեր՝ սլացայք.
ահա՛ տանջիմք՝ իբրև զձեզ,
առ ՚ի փոխել՝ զմեր կրօն.
հասէք հարէք՝ շրթանց սոցին,
զի զոր ուսաք՝ ձեօք ուսաք:

ՃԺԷ

Նախաւկայ՝ սարկաւազին,
պաշտօնակից՝ սուրբ Բաջաջ.
նմին նման՝ նահատակեալ,
յօգուտ տանն՝ Ռշտունեաց.
արիւնակից՝ եմք մեք նոցա,
անտես առնես՝ դու զմէնջ.
չատ են մեզ տէր՝ երբ դնիցես,
՚ի վերայ մեր՝ զքո սուրբ աջ:

ՃԺԸ

Արշէն երէց՝ Բագրևանդայ,
մաքրակրօն՝ հայր բարի.
որ առ ՚ի սէր՝ սուրբ հաւատոյ,
զոհէր զքեզ՝ անմահի.
աստ ոչ մոգպետ՝ որ տանջիցէ,
այլ մերազինք՝ տանջեն զմեզ.
շնորհ արա՛ տէր բարեխնամ,
ձեռն մատո՛ քո աղգի:

ՃԺԹ

Կենդանարար՝ հոգւոյն շնորհօք,
գետ յորդառատ՝ Ղևոնդեանք.
ձեօք ուռգեալ՝ Հայաստանեայք,
ապա սոքօք՝ մեր անդեայք.
այժմ աղուխուէք՝ արք խորամանկ,
մտին ՚ի նա՛ ՚ի յայրել.
դուք էք պաշտպան՝ աղգի ձերոյ,
զձեզ խնդրեմք՝ ո՛հ ո՛ւր կայք:

ՃԻ

Յոսկեպարարտ՝ լերանց Հայկայ,
ոսկի ընտիր՝ սուրբ Ռսկի.
որ ՚ի քրայս՝ խոշտանգանաց,
փայլեալ եղեր՝ քան զարփի.
զհետ հետոց՝ քոց ընթանամք,
զի՞ զրպարտիմք՝ մոլորեալ.
Ջնջեա՛ զսոսա՛ սպառսպուռ,
զի՞ դու մեզ հայր՝ մեք որդի:

ՃԻԱ

Ոսկի մաքուրք՝ ՚ի բոլս քննեալ,
 Աստուածարեալ՝ սուրբ Ռսկեանք.
 պատարագիչ՝ անմահ գառին,
 և պատարագ՝ ըստ ինքեանք.
 խաղաղութիւն՝ բարձաւ յազգէս,
 կագ և կռիւ՝ միշտ ՚ի մեղ.
 անտէս առնէք՝ դուք զմերովք,
 ոչ հայր ունիմք՝ մեք զՀայկ:

ՃԻԲ

Հարսնածուծեամբ՝ ըն Սաթիկայ,
 եղեր վրկչին՝ փեսաւէր.
 և թագստեամբ՝ քո ՚ի լերին,
 գտեր զՌսկի՝ սուրբ հայր մեր.
 են որք փոխեն՝ զոսկիս իւրեանց,
 զկրօնս ասեմ՝ յօտար ազգ.
 բարեխօսեա՛ն՝ սուրբ Սիւքիաս,
 զի ջանասցին՝ ՚ի յուղղել:

ՃԻԳ

Սակաղացեալք՝ յարօտ էին,
 Սիւքիասեան՝ սուրբ գառինք.
 որք զենեցայք՝ հրով հոգւոյն,
 մինչ ՚ի սեղան՝ տեառն ելիք.
 ձեօք ճանապարհ՝ գտաւ ազգ մեր,
 յերկինս ՚ի վեր՝ ելանել.
 այժմ ՚ի կորուստ՝ կարապետէ,
 հասէք յօգնել՝ հայկազինք:

ՃԻԴ

Յաւէրժացեալ՝ ՚ի փառս անանց,
 սուրբդ Ատովմ՝ գնունի.
 որ խրախոյս՝ ետուր բազմաց,
 տանջիլ ՚ի փառս՝ հայրենի.
 չիք աստ Յազկերտ՝ որ նեղեսցէ,
 յածել զմեզ՝ Աշտուշատ.
 այլ կագ կռիւ՝ ՚ի մեզ յոյժ յոյժ,
 խաղաղացո՛ հայր բարի:

ՃԻԵ

Օ ինուոր արիք՝ ո՛վ Ատովմեանք,
 հոգեխառնեալ՝ սուրբ երամք.
 որք առաթուր՝ կոխեցիք դուք,
 զգլուխ վիշապին՝ չարակամ.
 արդ զօրացաւ՝ դործովք մերովք,
 կամ է նորա՝ կլանել.
 Թէ ոչ նպաստ՝ գայցէ ՚ի ձէնջ,
 կորեաւ ազգ ձեր՝ միանգամ:

ՃԻԶ

Յառաջադէմ՝ քաջ խրախոյս,
 Հիպիրիքէս՝ սուրբ վկայ.
 նոր Շամունէ՝ եօթնեամբ տանջեալ,
 և պսակեալ՝ ընդ նոսա.
 Թէև չիք աստ՝ Անտիոքոս,
 այլ կայ մեծ վէճ՝ Թէ ո՞վ մեծ.
 հասիր ՚ի փառս՝ Վուսաւորչի,
 գուցէ խլեն՝ զգահ նորա:

ՃԻԷ

Հիպիրիքեանք՝ լուսազ ումարք,
 ազգիս հայոց՝ մահարձանք.
 որք շիջուցիք՝ զմուխս չարին,
 որով մինչ ցարդ՝ հաստատ կամք,
 այժմ արար՝ մուտ յազգս մեր.
 գերի վարէ՝ յայլ աշխարհ,
 արիք յօգնել՝ առ ազգս ձեր,
 յորովայնէ՝ ձեզ անկսիք:

ՃԻԸ

Անընկճելի՛ պարագլուխ,
 հազարէից՝ և բիւրուց.
 զորս առեալ՝ տարէր ընդ քեզ,
 յայն՝ յոր ցնծան՝ բիւրք բիւրուց.
 քեզ պաղատիմք՝ սուրբ Խարիթէս,
 փրկեա՛ զմեզ՝ ՚ի հետեւոց.
 որք յանդգնին՝ դուզնաքէիւք՝
 յորսալ զազգ մեր՝ բիւրք բիւրուց:

ՃԻԹ

Շրջապատեալ՝ ցանկով շնորհաց,
 այգիք պարարտք՝ Խարիթեանք.
 ՚ի ձէնջ ազոխ՝ ազգ մեր դաժան,
 եղեն խաղող՝ քաղցրահամ.
 արդ բանսարկուն՝ ձմիէ զմեզ,
 եկայք փրկել՝ յայսմանէ.
 դուցէ արբցեն՝ ՚ի բաժակէն՝
 ուրախասցին՝ խկ համայն:

ՃԼ

Սողոմոնեան՝ նաևն բերէր,
զոսկի ընտիր՝ Սովբերայ.
քո նաւ անձին՝ եբեր ՚ի հայս,
զսուրբ նշխարս՝ Ղևոնդեայ.
օն եկայք դուք՝ ով կուրացեալք,
տեսէք զիշխան՝ մեր Խուժի.
դուցէ այնու՝ զգստացեալ,
ուղղէք զձեր վարս՝ անուղղայ:

ՃԼԱ

Վու անդրանիկ՝ հաւատացեալ,
՚ի Թագաւորս՝ ով Աբգար.
յապաքինիլ՝ յախտէ քումմէ,
՚ի միածինն՝ յուսացար.
իցէ՞ արդեօք՝ ազգ քո ընդ քեզ,
առողջասցին՝ յիւր վիրաց.
զի ՚ի դիմաց՝ և ՚ի Թիկանց,
այլակրօնք՝ ձախեն յար:

ՃԼԲ

Նախավկայ՝ Թագաւորին,
համեստ տիկին՝ Հեղինէ.
որ յետ սրբոյ՝ մկրտութեան,
հրաժարեցար՝ յաշխարհէ.
դու որ տենչմամբ՝ փափագելի,
դտէր զփայտն՝ փրկութեան.
խնդրեա՛ն զարդիս՝ վասն ազգիս,
սիրել զիսեարս՝ ՚ի սլտէ:

ՃԼԳ

Քրիստոսազգեաց՝ սուրբ վարդապետ,
 Իգնատիոս՝ հայր ազնիւ.
 եկեղեցիք՝ հայաստանեայց,
 պատսպարին՝ քո բանիւ.
 վայ այնոցիկ՝ որք քակեն զցանկ,
 սուրբ օրինաց՝ հայրենեաց.
 չաժեն զմտաւ՝ զբան գրոյն,
 քակտիչք քակտին՝ համայնիւ:

ՃԼԴ

Մի պարծեսցի՝ մեծն յունաստան,
 յիւր մեծանուէն՝ Հովերոս.
 զի մեծ քան զսա՝ ունի ազգ մեր,
 զվարդապետդ՝ Սիրակոս.
 զի՞նչ այն անոյշ՝ քո շարական,
 զարևելքն ասեմ՝ գերարժին.
 վայ ձեզ հետեալք՝ որք շեղեցայք,
 և էք զազգէս՝ չարախօս:

ՃԼԵ

Թող լռեսցէ՝ մեծն Հռովմ,
 գիտնականօք՝ իւր համայն.
 ընդ մեկնութիւն՝ կաթողիկեաց,
 մարգարտաշար՝ քո մատեան.
 զի՞ չամաչէք՝ ՚ի բամբասել,
 տեսեալ զսոսա՝ անզգատեացք.
 տուր սոցա շնորհ՝ շնորհալի,
 սուրբդ Սարգիս՝ հայկազեան:

ՃԼԶ

Յեօթանասնից՝ աշակերտաց,
 եկիր 'ի մեծ՝ հայաստան.
 աշակերտեալ՝ Թագէտսի,
 եղեր նմին՝ համանման.
 դու անհանգիստ՝ յօտար ազգաց,
 մեք անհանգիստ՝ յազգայնոց.
 եկ պաշտպանեա՛ սուրբ Ստաթէոս,
 ընդ հովանեաւ՝ զմեզ համայն:

ՃԼԷ

Յնծա՛ ցնծա՛՝ մեծ հայաստան,
 յանախտ փեսայդ՝ սուրբ հարսի.
 'ի գահակալն՝ քո Աթոռոյն,
 'ի Զարբարիա՛ տէր արհի.
 քեզ ակնու՛նիմք՝ ո՛ր ընտիր տէր,
 յազգատեցաց՝ զմեզ փրկել.
 որք անյագուրդ՝ իբրև զտղրուկ,
 ծծեն զարիւն՝ ազգակցի:

ՃԼԸ

Ներբողեալդ՝ յիմաստութեան,
 սուրբդ Յովսեփ՝ Պաղնացի.
 որ ընդ սրբոց՝ հարց թարգմանչաց,
 աշխատ եղեր՝ վասն ազգի.
 են որք խնու՛ն՝ զականջս իւրեանց,
 չառնուլ զձայն՝ ճարտարի.
 առ ոտն հա՛ր՝ դու զսոսա,
 զի մի սիրտ մեր՝ խոցեացի:

ՃԼԹ

Բնկերակից՝ եղեր սրբոյս,
դու յեկեղեաց՝ գաւառէ .
սուրբդ Յովհանն՝ ներհուն թարգման,
պարգևեալ մեզ՝ ՚ի Տեառնէ .
մեծ են այն՝ ձեր երախտիք,
առ հայկազեան՝ ազգս մեր .
վայ հեստեւոց՝ որք չար նիւթեն,
զիւրեանց հօրէ՝ զեղբօրէ :

ՃԽ

Յընտիր ոսկեանց՝ շնորհաց գանձուց,
ոսկի արձան՝ սուրբ Արձան .
քո հոգեշարժ՝ թարգմանութիւնք,
մնան մինչ ցարդ՝ իբր արձան .
եթէ չիցեր՝ ձեր այդ վաստակ,
մեղ ինչ ոչ գոյր՝ հեստեւոց .
արդ չիք պատճառ՝ մեղաց նոցա,
ուստի արա՛՛ դու կործանէ :

ՃԽԱ

Ազդուութեամբ՝ հոգւոյն սրբոյ,
անուանեցար՝ Աբրահամ .
դի հայր եղեր՝ սուրբ հաւատոյս .
՚ի ձեռն քո՝ գրութեան .
չեմք հարձորդի՝ որք մեկնիցուք,
՚ի ձէնջ ո՛ հայր՝ բազմերախտ .
թէև ելին՝ ՚ի մէնջ ոմանք,
յուսամք անշուշտ՝ թէ դառնան :

ՃԽԲ

Մանկիա՛ եպիսկոպոս,
 սուրբ Թարգմանչացս՝ համափառ.
 յածել ՚ի հայս՝ զլեզուս ազգաց,
 յածեար անխոնջ՝ յայլ գաւառ.
 Է որ յածի՛ իբրև զքեզ,
 այլ ոչ շինել՝ այլ քակել.
 Թէև հերքեաւ՝ ՚ի յիւրայնոց,
 հերքեա՛ւ և դու՝ ով սուրբ Հայր:

ՃԽԳ

Մորաձիգ՝ ամուլք հզօրք,
 անդաստանացս՝ հայկազնեաց.
 Տիրայր Մուշէ՛ հարք հանձարեզք,
 փայլեցուցիչք՝ դպրատանց.
 նա՛ որք ուսան՝ ընդ մեզ ՚ի ձէնջ,
 օտարացան՝ այժմ ՚ի մէնջ.
 ո՛հ երբ իցէ՛ լինել սոցա,
 պաղակորոյս՝ ոստաքանց:

ՃԽԴ

Միւնք հաւատոյ՝ հարք հոգեկիրք,
 մեծդ Ենովք՝ և Դանան.
 ՚ի ձէնջ ուսան՝ հարք մեր զօրէնս,
 որք ընդ Յոյնս՝ և Յապուան.
 փայ՛ ձեր գլխոյն՝ երախտամոք,
 էր Թողիք զձեր՝ զուսուցիչս.
 որք կոչեցան՝ յարքայութեան,
 մեծ ըստ բանին՝ սէրուներան:

ՃԽԵ

Մատուածաւանդ՝ սուրբ խորհրդոյն,
 մատակարար՝ հայր բարի.
 սուրբ Յովնաթան՝ երէց ընտիր,
 դրան արքային՝ աղուանի.
 ել միրիկ՝ յարեմտից,
 խորասուզել՝ զմեր սուրբ Ռւխտ.
 սաստեանց այտի՝ զի լռեսցէ,
 գուցէ ազգ քո՝ տուժեսցի:

ՃԽԶ

Նոր Երեմիա՝ ցուցար ազգիս,
 սուրբ սարկաւազդ՝ Երեմիա.
 որ սրբեցար՝ շնորհօք հոգւոյն,
 'ի ձեռն սուրբ՝ Սահակայ.
 եկ արդ ողբա՛ զատելիս մեր,
 որպէս երբեմն՝ մարգարէն.
 զի ոչ պակաս՝ քան զԻորակէլ,
 ունին լինել՝ այժմ ապա:

ՃԽԷ

Յապուշ կրթիմք՝ յեռանդ սրբոյդ,
 ով տէր ընծակ՝ քաջ թարգման.
 ուր հայաստան՝ ուր պաղեստին,
 ուր գեգերիս՝ գրել զբան.
 վայ մեր անմիտ՝ ազգատեցաց,
 որք դժգոհեն՝ զմերայնոց.
 ցանկան յագիլ՝ 'ի սխառութ,
 և յեղիպտոս՝ իսկ դառնանս:

ՃԽԸ

Մեթացակից՝ և գործակից,
 սրբոյ հօրս՝ տէր Խոսրով.
 ՚ի թարգմանել՝ զհին մատեանս,
 յածար յերկիր՝ և ընդ ծով.
 չամաչէք դուք՝ ո՛ր ազգատեացք,
 որք մոռացայք՝ զայսպէս հայր.
 և հարկանէք՝ յանդգնաբար,
 բայց չգիտէք՝ եթէ զո՞ւր:

ՃԽԹ

Ո՛չ ինչ պակաս՝ յանուանակցւոյդ,
 աշխատ եղեր՝ քո ազգի.
 տէր Անդրէաս՝ համապատիւ,
 առաքելոյն՝ թաղէի.
 յարեան ոմանք՝ հակառակորդք,
 եղծել զեղծել՝ զաւանդեալս.
 զքեզ ունիմք՝ զայլ ոք չունիմք,
 մի տար զմեզ՝ օտարի:

ՃԾ

Արագաշարժ՝ թևօք հոգւոյդ,
 աղաւնակերայ՝ սլացար.
 հայաստանեայց՝ ՚ի միջագետ,
 վասն ազգիս՝ Ղա՛զրիկ հայր.
 են որ շրջին՝ ցանեն զորումն,
 հեղձուցանել՝ զմեր ցորեան.
 օրհնեալ է տէր՝ զի չե՛ ՚ի կալ,
 սկսան վաղ՝ չորանալ:

ՃԾԱ

Օ արմանալի՛ է ընտրութիւնդ ,
 տէր Զաքարիա՛ Հայր բարի .
 որ առօրին՝ առ ընկալար ,
 զհամայն պաշտօն՝ սուրբ Ռւխտի .
 պատկառեցէ՛ք՝ ո՛ր ազգատեացք ,
 'ի կոչմանէս՝ մեր սուրբ հօր .
 մի չար խօսիք՝ զեկեղեցւոյս ,
 զոր սա լցոյց՝ լիութի՛ :

ՃԾԲ

Ս երապատուեալդ՝ 'ի գիտութեան ,
 սուրբ վարդապետդ՝ Ճոն Բարսեղ .
 քե ափռեցան՝ զհայաստանեաւ ,
 ձիրք իմաստից՝ քան զհեղեղ .
 են որք հերձան՝ եղեն յայր յայլ ,
 առ նախանձու՝ զմեղ ատեն .
 հար ուժգնակի՛ զդէմս սոցա ,
 օծեալ աջով՝ քո զօրեղ :

ՃԾԳ

Մ ա ձեզ փութաւք՝ ո՛վ սուրբ վկայք ,
 Ռսեմիոս՝ Աթանաս .
 կարկառեալի՛ք՝ զօծեալ աջ ձեր ,
 առ վշտացեալս՝ հայկազնեայս .
 ոչ թէ տանջէ՛ Ղոմեափանոս ,
 իբրև զձեզ՝ շամբուրիւ .
 այլ թունաւոր՝ բանք հետեւոց ,
 ձգին առ մեզ՝ քան զաւագ :

ՃԾԴ

Ի Բաղիշոյ՝ բերրի երկրէ,
վարդ կարմրափայլ՝ սուրբ Վարդան,
որ ոչ պակաս՝ քան զնախնւոյն,
եղեր ազգիս՝ դու պաշտպան.
Թէև բաց են՝ եկեղեցիք,
և Շամշատին՝ էջ ՚ի դժոխս.
այլ ձեռք չարաց՝ կան ՚ի ձախել,
եկ լեր ազգիդ՝ օգնական:

ՃԾԵ

Հնոց նորոց՝ կտակարանաց,
դու տապանակ՝ հոգեկիր.
տէր Գրիգոր՝ սկւռացի,
տածող ազգիս՝ անձանձիր.
ելին ՚ի մէնջ՝ տունկ Գոմորայ,
բերեն զխաղող՝ դառնութեան.
չ'պատուաստեալ՝ ընդ այլում տունկ,
խլեա՛ զնոսա՛ անկ յերկիր:

ՃԾԶ

Սեծ ես դու տէր՝ քան զԱբրահամ,
եպիսկոպոսդ՝ Աբրահամ.
որ զԻսահակ՝ չելեր զենել,
այլ զքո՞ անձնդ՝ ինքնակամ.
եւ Սեմէի՝ յազգէս մերմէ,
յանիծանել՝ զազգն իւր.
Թէպէտ ըստ նոյն՝ ունի կրել,
այլ դու փոյթ հար՝ միանդամ:

ՃԾԷ

Ո՛վ սուրբ Սատոբ՝ եպիսկոպոս,
 եկեղեցւոյն՝ Տիսբոնի.
 որ զքանքար՝ Տեառն շահեալ,
 մտեր ՚ի փառս՝ անձկալի.
 Սաբուռիոս՝ չիք որ նեղէ,
 որպէս զձեզ՝ զազգս ձեր.
 այլ ազգատեացք՝ խայթեն անխիղճ,
 եկ պաշտպանեա՛ն Հայր բարի:

ՃԾԸ

Յիսուսազգեաց՝ արթուն հովուոյս,
 բանաւոր հօտ՝ սուրբ Ակայք.
 որք ՚ի պահել՝ զօրէնս նախնեաց,
 իբրև զոչխար՝ զենեցայք.
 են աստ ոմանք՝ որք չամաչեն,
 փոխել զօրէնս՝ ըստ քմաց.
 ամաչեացեն՝ յամօթ լիցին,
 գործովք իւրեանց՝ ընդունայնք:

ՃԾԹ

Ո՛վ սուրբ Աւագ՝ Բաղիշեցի,
 անյաղթ վկայ՝ Զրիատոսի.
 հիացուցեր՝ զԱմիր Շարաֆ,
 չարչարանօքդ՝ բազմազգի.
 մի արգելցես՝ զքո զթութիւնդ,
 յարիւնակցաց՝ քոց եղբարց.
 որք տառապին՝ յազգատեցաց,
 վասն հայրենեաց՝ կրօնի:

ՃԿ

Արպէս Ատովմն՝ այն առաջին,
 նոյնպէս և դու՝ սուրբ Ատովմ.
 համանման՝ վաստակեցար,
 վասն ազգիդ՝ հայկազուն.
 Քաղղէացիք՝ յարեան 'ի մէնջ,
 չարախօսել՝ զօրինաց.
 տուր սոցա Տէր՝ ըստ գործոց սոցա,
 որպէս եղև՝ 'ի հնումն:

ՃԿԱ

Ուսամթռիչ՝ սրբոց դասուց,
 դասակարգեալ՝ սուրբ Աասակ,
 որ անվեհեր՝ խիզախեցեր,
 'ի սուր իբրև՝ սուրհանդակ.
 ոչ թէ Բուղայ՝ տանջէ զմեզ,
 Թողուլ զկրօն՝ հայրենեաց.
 այլ հարք ոմանք՝ սուտակասպար,
 էկ ազատեա՛ն՝ զքո ազգ:

ՃԿԲ

Քեզ պաղատիմ՝ ո՛վ սուրբ Մլէհ,
 քաջ նահատակ՝ տիրազգեաց.
 որ լաւ վարկար՝ վասն ազգիս,
 զոհել Տեառն՝ զքո անձն.
 յարեաւ 'ի մէնջ՝ Ա. քիտոփէլ,
 գժգմնել զմեզ՝ յօտար ազգ.
 Թէև ըստ նոյն՝ ունի պատժիլ,
 դու վաղ ջնջեա՛ն՝ զսորին ցանց:

ՃԿԳ

Ի Փեթակէ՝ Հողւոյն սրբոյ,
 Գէորդ Մեղրիկ՝ վարդապետ,
 անուշեցեր՝ զազգս Հայոց,
 քո գրութեամբ՝ հոտաւետ.
 այժմ յորդէ՝ ջուր մեռային,
 հերձուածողաց՝ ասեմ բանք.
 շրջապատեա՛ն՝ զանցս սորին,
 զի մի հեղցին՝ ՚ի մեր գետ:

ՃԿԴ

Արարչագործ՝ բազկաց Փրկչին,
 անծախելի՝ քաջ գործի.
 Տէր Գրիգոր՝ սուբբ Հայրապետ,
 տղայ անուէն՝ տարփալի.
 իցէ՞ արդեօք՝ որպէս Դաւիթ,
 ելանել քո՝ ՚ի ճակատ.
 զի են ոմանք՝ որք նախատեն,
 զմեր կրօնս՝ հայրենի:

ՃԿԵ

Համանման՝ երից Մանկանց,
 դուք հարազատք՝ երեքին.
 Եղիա Մովսէս՝ և Դանիէլ,
 ընտիր վկայք՝ արարչին.
 զձեզ խողխողեաց՝ հայր ձեր դաժան,
 զմեզ խողխողեն՝ մեր եղբարք.
 միջնորդ լերուք՝ առ Տէր Աստուած,
 զի սուբբ սոցա՝ բթացին:

ՃԿԶ

Մշակերտեալ սուրբ Թարգմանչայ,
 մեծ վարդապետդ՝ Խաչատուր.
 քո լուսափայլ քարոզութեամբ՝
 պայծառացաւ՝ Գիւղն Ակոռ.
 ելին զարդիս՝ հակառակորդք,
 որք աքացեն՝ ընդ խթան.
 հար զսոսա՝ շրայութեամբ,
 զի ծանկցեն՝ զքեզ Հզօր:

ՃԿԷ

Մ աքերոյն՝ Շմաւոնի,
 համակարիք՝ համանուն.
 Աստուածընտիր՝ Դէտ քաջալանջ,
 սուրբ վարդապետդ՝ Շմաւոն.
 ուր քո ուռկան՝ քարոզութեան,
 որ պարպատէր՝ հազարօք.
 փցէ ձգիլ՝ առ մեր հետտեալս,
 դեռ չընկղմեալ՝ կենդանւոյն:

ՃԿԸ

Յընտրեալ դառանց՝ Հովուապետին,
 սուրբդ Օհան՝ Գառնեցի.
 ուր քո բառաչ՝ քաջազդեցիկ,
 հայաստանեաց՝ տարփալի.
 են աստ ոսանք՝ յուշկապարիկք,
 առնել զազդ մեր՝ ծովամոյն.
 մի՛ դադարիր՝ ձայնել առ մեզ,
 չառնուլ զձայն՝ օտարի:

ՃԿԹ

Մի երջանեիկ՝ ընտրեալ Հովիւ,
սուրբ վարդապետդ՝ Մխիթար.
քո կենարար՝ քարոզ խրատ,
են մեզ մինչ ցարդ՝ մխիթար.
ուսցին 'ի քէն՝ որք կոչին հարք,
զի՞նչ անուէն է՝ մխիթար.
և ջանասցին՝ իբրև զքեզ,
լինել ազգիս՝ մխիթար:

ՃԶ

Ար շոշափեաց՝ զբանն կենաց,
էօծ զքեզ՝ Առաքեալ.
Տէր Եղիշէ՝ քաջ աշակերտ,
Թաղէոսի՝ մեր սուրբ հայր.
չորանայիք՝ լեզուք չարաց,
եղծեն զօրէնս՝ ձեր ո՛ տէր.
Երբ որդնայից՝ ունիս առնել,
զի հանգչեսցուք՝ մեք խապառ:

ՃԶԱ

Մնբաւ է յոյժ՝ քո երախտիք,
պսակաղարդ՝ քաղաք Սիս.
'ի քէն տուտ՝ և այս շնորհ,
մեծ վարդապետն՝ Գրիգորիս.
Երախտապարտ՝ եմք ազգովին,
նորին և ձեր՝ պարգևաց.
վայ հետտելոց՝ որք ուրացան,
զնորայն և զքոյդ՝ երախտիս:

ՃԶԲ

Ահ կալաւ զմեզ՝ զամենեսին,
 'ի վարս ձեր՝ ով վկայք.
 Տեր Յակոբոս՝ մեծ քահանայ,
 և սուրբ Ազա՝ Սարկաւազ.
 'ի լուանայ՝ դահճին զսուր,
 արիւնացաւ՝ լիճն խկոյն.
 իցէ արդեօք՝ այն ձեր արեամբ,
 փոխեցցին մեր՝ ստահակք:

ՃԶԳ

Թագաւորեալ՝ պսակեցար,
 Թէ 'ի յերկրի՝ Թէ յերկնի.
 Տրդատ Արքայ՝ հայոց մեծայ,
 հայաստանեայց՝ լոյս արփի.
 քե ծաղկեցան՝ գեղատեսակ,
 բոյս և ծաղիկ՝ հաւատոյ.
 այժմ խորշակ՝ չարին եհար,
 ծաղկեցո՛ւ զայն՝ կրկնակի:

ՃԶԴ

Արպէս մարմնով՝ նայնպէս հոգւով,
 պսակակից՝ արքայի,
 Աշխէն տիկին՝ սուրբ աղախին,
 անմահ Բանին՝ սիրելի.
 ո՛ւր այն վաստակ՝ քո հոգեջան,
 պայծառ պահել՝ զազգն քո.
 մատիր յօգնել՝ քո սիրելւոյ,
 գուցէ բնաւ՝ եղծիցի:

ՃԷԵ

Խոսարովիդուխտ՝ բոյս բարեբեր,
 միշտ ծաղկածին՝ դալարի.
 քեզ զարդարեալ՝ գեղեցկացան,
 եկեղեցիք՝ մեր ազգի.
 այժմ դժնիկ՝ փուշք խոցուալիք,
 հեղձուցանեն՝ չարաչար.
 մաղթեա՛ս առ Տէր՝ սպառել զայն,
 պահել ՚ի փառս՝ քո կուսի:

ՃԷԶ

Ա՛չ վայրապար՝ կոչեցար դու,
 Ա՛շոտ Արքայ՝ ողորմած.
 զի ՚ի շինել՝ զեկեղեցիս,
 ո՛չ փակեցան՝ քոյին գանձք.
 վայ՛ հետտելոց՝ ապաշնորհաց,
 որք բռնանան՝ կործանել.
 կործանեացին՝ անկանգների,
 թէ՛ յանցաւորս՝ թէ՛ յանանց:

ՃԷԵ

Եւ դու տիկին՝ Խոսարովանոյշ,
 համալաստակ՝ կենակցիդ.
 որ քաջալեր՝ լինէիր ցանկ,
 վասն սիրոյ՝ քո ազգիդ.
 ամաչեացեն՝ ապաշնորհք,
 որք խանգարեն՝ գողջամիտս.
 երկան իշոյ՝ ՚ի սպարանոց,
 անկցին ՚ի ծով՝ բազմափշտ:

ՃՖԸ

Յաւերժական պարգեատու,
 զօրեղ արքայ՝ Վաչական.
 որ զնշխարս՝ Գրիգորիսի,
 գտեր ածեր՝ ՚ի յաղուան.
 դու առ հողս՝ սրբոց փութաս,
 են որք զներկայս՝ ուրանան.
 մաղթեա՛ ընդ մեզ՝ յանուն սրբոյս,
 տալ սոցա լոյս՝ գիտութեան:

ՃԶԹ

Նախանձաւոր՝ առնդ բարեաց,
 Ատուածապաշտ՝ մեծ Տիկին.
 որ առնաձև՝ պեղեր զերկիր,
 ՚ի գիւտ մասանց՝ երջանկին.
 պատկառեսցին՝ յերկանց ձերոց,
 որք յարեալք են՝ յօտար դէտ.
 եկ հայցեսցուք՝ վասն սոցա,
 յառաջնորդիլ՝ յիսկ ուղին:

ՃԶ

Տիրապետող՝ Յունաստանաց,
 Արշակունիդ՝ Ասյսր Վասիլ.
 զայդ գահ կանխաւ՝ մարդարեաց,
 սուրբն Սահակ՝ հոգերնափր.
 լուար ՚ի քո՝ գահակալել,
 զհաւատոց՝ քոց արատ.
 այժմ առիմէ՝ արատեն զայն,
 հար զարատօղս՝ դու յերկիր:

ՃՁԱ

Թագաւորեալ՝ ՚ի Յունաստան,
չմշկիկ Ասյար՝ Մերուժան.
քև փայլեցան՝ ՚ի մէջ ազգաց,
կրօնք և ծէսք՝ հայկական.
արդ բանասարկուին՝ թերադրութեամբ,
յարան ոմանք՝ յօտար ազգ.
հար զսոսա՝ ով համազգի,
չբանբասել՝ զազգ հայկեան:

ՃՁԲ

Եւ դու քաղաք՝ Աիլիկիա,
եկ լեր ընդ մեզ՝ ձայնակից.
ներբողել միշտ՝ զԼեոն Արքայ,
պսակադիրն՝ քո՝ ազգիս.
ուր էր լինել՝ մեր ընդ առաջ,
զի սարսէին՝ ապերախտք.
գէթ տեսեալ զայն՝ յուշ ածէին,
զնորին անչափ՝ երախտիս:

ՃՁԳ

Սիրանաճին՝ ազնիւ ծնունդ,
չեթոմ արքայ՝ Ռուբինեան.
յսքանչելի՝ գործս վեհիդ,
ափ ՚ի բերան՝ կամք համայն.
Մաթուսաղայ՝ քեզ ճահ էր լեալ,
որ տեէիր՝ մինչ ցայս դար.
զի որք այժմ՝ են չարաբան,
էին յայնժամ՝ օրհնաբան:

ՃԶԴ

(Օգոստոսիս ապազատեալ,
 Թորոս արքայ՝ փառաւոր.
 Վայելչապէս՝ հիմնեցուցեր,
 Ղրազարկ՝ ՂՄաշկեւոր.
 Ուր Թողից զայն՝ շինուած շքեղ,
 Անազարբա՝ կառուցեալ.
 Թուք յերեսս ձեր՝ ո՛ւ ազգատեացք,
 Էր ուրացայք՝ զայսքան շնորհ:

ՃԶԵ

Աշխարհակալ՝ Գագիկ արքայ,
 պարծանք ազգիս՝ հայկազանց.
 որ զհանգիստ՝ հասարակաց,
 լաւ վարկար դու՝ քան զքոյղ անձ.
 Ով իշխեր մեզ՝ խօսել զազգէս,
 յորժամ հզօրդ՝ էր ընդ մեզ.
 նա՛ վստահ եմ՝ թէ մերձ ընդ մերձ՝
 ունին լինել՝ գետնամած:

ՃԶԶ

(Հարի ազանց՝ Բագրատունեաց,
 Աշոտ արքայ՝ յաղթանդամ.
 զքեզ ներբողեաց՝ Պերսիէլուժէն,
 և ամիրայն՝ իսկ Մաքսամ.
 դու զուրացօղս՝ ածեր կրկին,
 ՚ի սուրբ հաւատս՝ առաջին.
 ոչ՝ փրկես զմեզ՝ յազգատեցաց,
 որք չարչարեն՝ յարաժամ:

ՃԶԷ

Մեքատ արքայ՝ Բագրատունի,
պարծանք փառաց՝ հայկազնուոյ,
որ խաչակցեալ՝ ընդ խաչելոյն,
պսակեցար՝ Սատուծոյ.
մի մուանար՝ զքո ազգայինս,
զորս առ ծիսից՝ Թանջեն չարք.
մղեա՛ զձեռսդ՝ ՚ի փող սոցա,
վասն փառաց՝ անուան քո:

ՃԶԸ

Հռչակաւոր՝ արքայդ կարուց,
քաջդ Աբաս՝ հայկազուն.
քե կառուցան՝ եկեղեցիք,
և վանորայք՝ մեր համբուն.
անհետասցի՝ քո այդ վաստակ,
զի՛ ոչ վարեա՛ զթշնամիս.
որք կան առնել՝ զհիմն ՚ի վեր,
բարուրանօք՝ չարագոյն:

ՃԶԹ

Մեծավաստակ՝ վասն հայրենեաց,
Գագիկ արքայ՝ շահրնշահ.
ազգի ազգի՝ խնամովք քով,
եզիտ ազգ մեր՝ զբազում շահ.
դու շինեցեր՝ զկաթողիկէն,
են որք ջանան՝ զայն քակել,
ցրուեա՛ հզօր՝ զօրութեամբ քով,
զի եղիցուք՝ մեք անահ:

ՃՂ

Անգուգական՝ բարեաց բաշխող,
Վռամշապուհ՝ մեծ արքայ.
որ ջանացար՝ ընդ սրբոց հարց,
ածեր ՚ի հայս՝ զԱթուծայ.
մի ինչ գրեր՝ տէր բարերար,
զտարագրիլն՝ մերագնեաց.
ունել ունին՝ տուծիլ անշուշտ,
գէթ յերեսաց՝ այժմ հապա:

ՃՂԱ

Այսերագուն՝ վսեմաշուք,
իշխան հզօր՝ Աստանդին.
որ պաշարիւք՝ և զինուորիւք,
պաշտպանեցեր՝ զԼատին.
ո՛ւր ես ո՛վ տէր՝ Գրիգոր Պապ,
երեքասաներորդ՝ հայրապետ.
կարդա՛ զներբողդ՝ որ վասն ազգիս,
գոնէ ոսոխք՝ խիթասցին:

ՃՂԲ

Արտորնդոստ՝ ամպ շանթահար,
Օջին իշխան՝ մեծաշահ.
յահէ քումմէ՝ թշնամիք մեր,
պակեան թագեան՝ ահ ընդ ահ.
փայլատակեա՛ն՝ ո՛ հայկազուն,
զքո՞ ցովմունս՝ ՚ի ժամուս.
զի սարսիցեն՝ ոսոխք ազգիս,
և եղիցին՝ արհամարհ:

ՃՂԳ

Յընտիր տոհմէ՝ Մամիկոնեան,
ազնիւ իշխան՝ Մանուէլ.
Նոր Փենէհէս՝ ցուցար յունաց,
զսուրբ պատկերս՝ ՚ի պաշտել.
պատկերամարտ՝ կայսրն Մեքայէլ,
Թէողորիա՝ Թէ և չիք.
այլ այլակրօն՝ առնել զազգ քո,
Ժպրհին ոմանք՝ Էկ տէր լեր:

ՃՂԴ

Պայծառացեալ՝ անմահ վառօք,
սիւնեաց Սեպուհ՝ մեծդ Յազդ.
որ վասն քո՝ հարազատաց,
արկեր զքեզ՝ ՚ի տապատ.
ըստ սոյն սակի՝ տանջիմք և մեք,
վասն պատուոյ՝ մեր սուրբ հարց.
փշրեա՛ն ո՛վ տէր՝ զտանջանարանս,
զի եղիցուք՝ հանգիստ աստ:

ՃՂԵ

Համավատակ՝ արօրաձիգ,
անդաստանաց՝ Թորգոմայ.
մեծդ Ներսէհ՝ և Հրահատ,
պարծանք ազգիս՝ յարակայ.
մի մոռասջիք՝ զճիգս ձեր,
այլ հսկեջիք՝ ՚ի պահել.
զի յաւելան՝ որոմնացանք,
յապականել՝ զգոյս հայկայ:

ՃԼԶ

Մտուածասէր՝ մեծ նահապետ,
քաջդ Չուրայ՝ Ռշտուհի.
'ի լուր անպարտ՝ մահուան սրբոյն,
լքեր զարքայն՝ զմոյի.
եկեղեցիք՝ մեր նախատին,
'ի հերձուածոց՝ այժմ անպարտ.
համբերիցես՝ 'ի նպաստել,
նմա և քո՝ ազգակցի:

ՃԶԷ

Մի տէր Վահան՝ Ամատուհի,
հայաստանեայց՝ պարիսպ կուռ.
որ ոչ պակաս՝ քան զԴաւթեան,
հնչէ բարբառ՝ քո 'ի սփիւռ.
նա յանուն Տեառն՝ դու 'ի տուն Տուն,
յուսացելով՝ յաղթեցեր.
եկ անկ զսանձ՝ չարախօսաց,
եկեղեցւոյ՝ քո Հզօր:

ՃԼԸ

Մենափառ՝ իշխան հզօր,
Ներսէս պատրիկ՝ հայկազուն.
քո քաջութեան՝ և գիտութեան,
մատեան եղէն՝ Վատին Յոյն.
ո՛ւր գահակալն՝ Յօհաննէս երրորդ,
որ ած զքեզ՝ 'ի հռովմ.
եթէ աստ էր՝ և զմեզ յարգէր,
զի քաջ գիտէր՝ զմեր կրօն:

ՃՂԹ

Իշխանազուն՝ պարթևազուն,
 Սահակ մարզպան՝ քաջ Վասակ.
 որք առ 'ի սէր՝ սուրբ հաւատոյ,
 զինու հոգւոյն՝ զինեցայք.
 դուք նենգեցայք՝ 'ի Վախթանկէ,
 ձեր հարազատ՝ յազդակցէ.
 մեք նենքիմք աստ՝ յարիւնակցաց,
 հասէք լերուք՝ օժանդակ:

Մ

Օրւարթարոյս՝ ջահք անազօտք,
 Մուշեղ իշխան՝ գայլ Վարդան.
 որք պահեցիք՝ զազգս հայոց,
 'ի լոյս աստուած՝ գիտութեան.
 զձեզ Վարչիր՝ տանջեր յաւերժ,
 զմեզ տանջեն՝ հետեցեալք.
 ցուցի՛ք զձեզ՝ աստ 'ի ժամուս,
 զի ցրուեսցին՝ միանգամ:

ՄԱ

Հասարակաց՝ հայր բարեխնամ,
 Պահլաւունիդ՝ տէր Վահրամ.
 դու մեզ 'ի յամպ՝ դու մեզ 'ի սիւն,
 եղեր անշուշտ՝ յարածամ.
 մի արգելցես՝ խնամարկօղ,
 զգթութիւնդ՝ յազգայնոց.
 որք տազնապին՝ յանառակաց,
 վասն ծիսից՝ նախնական:

ՄԲ

Աշխարհաշէն՝ գործով մեծաւ,
յաւերժական՝ բարձր արձան.
Գրիգորիոս՝ Պահլաւունի,
անուանակցւոյդ՝ ազգական,
քո անհամար՝ վանք մենաստանք,
եկեղեցիք՝ դպրատունք.
քակտին 'ի ձեռս՝ ազգատեցաց,
Թէ ոչ լիցիս՝ մեզ պաշտպան:

ՄԳ

Պսակազարդ՝ սուրբ շառաւիղք,
Արշակունիք՝ քաջ արանց,
որք 'ի պարծանս՝ Հաւոյն մերոյ,
ստացայք աստ՝ զփառս անանց.
այժմ ոմանք՝ հերձեալք 'ի մէնջ,
փոխան սուրբ Հօր՝ զայլն յարգեն.
արիք հզօրք՝ 'ի սէր ազգիս,
և 'ի պատիւ՝ մեր սուրբ Հարց:

ՄԴ

Թագազարդեալ՝ կայսերազունք,
Բագրատունիք՝ կորովիք.
որք զհայաստան՝ եկեղեցեօք,
վանօրէիւք՝ լցուցիք.
արդ ստահակք՝ ելին 'ի մէնջ,
տապալեն զայն՝ հիմն 'ի վեր.
հասէք հարէք՝ զնոսա ուժգին,
դեռ չարարեալ՝ զնոսա լիք:

ՄԵ

Փառազարդեալ՝ իշխանազունք,
 պարծանք հայոց՝ Ռուբինեանք.
 նոր Մատաթի՝ ցուցայք ազգիս,
 պայծառ պահել՝ զանունն Հայկ.
 այժմ անառակք՝ յորդուոց ձերոց,
 չոգան ՚ի գիրկս՝ օտարաց.
 եկայք յօգնել՝ ո՞ համազգիք,
 ո՞չ անդատին՝ կոչիմք Հայք:

ՄԶ

Ի վշաբեր՝ շառաւիղէ,
 վարդ կարմրաւիայլ՝ Սանդուխտ կոյս.
 քե հոտոտեալ՝ զմայլեցաւ,
 Արարչակից՝ Բան և լոյս.
 Թէպէտ չիք աստ՝ Սանատրուկ,
 որ հալածէ՝ զմերայինս.
 այլ պառակտիմք՝ մեք յիրերաց,
 լեր վասն ազգիդ՝ բարեխօս:

ՄԷ

Ի յաղցաւոր՝ կենաց ծովէս,
 դու մարդարիտ՝ Հռիփսիմէ.
 պսակ եղեալ՝ ելեր յերկինս,
 և դասեցար՝ ընդ աջմէ.
 արդ Թշնամին՝ չարաշուկ,
 արկ ՚ի մէջ մեր՝ զհեռ զնախանձ.
 փութն աննել՝ Թաւազլոր,
 զայն որ հարէր՝ ՚ի բնէ:

ՄԸ

Մեկերակիցք՝ պսակակիցք,
 արքոյ կուսիս՝ Հռիփսիմեանիք.
 ձեր վարդապետայլ՝ հեղմամբ արեան,
 գեղեցկացան՝ մեր անդեայք.
 այժմ՝ ՚ի նմա՝ դուամարք չարին,
 աճիլ աճեն՝ օրքան զօր.
 օն արիք դուք՝ հերքել զնոսա,
 դերևասցին՝ ձեր վաստակք:

ՄԹ

Յեթերս երկնից՝ յաստեղս պայծառ,
 գիտաւոր աստղ՝ Գայիանէ.
 քե ճանապարհ՝ հորդեալ ազգ մեր,
 գտին զմանուկն՝ ՚ի մարէ.
 ծագեա՛յ յայտի՛ ճաճանչ լուսոյդ,
 զի դարձ դոցուք՝ ՚ի չարեաց.
 զի մի՛ գուցէ՛ տարցի ՚ի մէնջ,
 որպէս երբեմն՝ ՚ի ժանտէ:

ՄԺ

Սուսապայծառ՝ աստեղք մաքուր,
 դասեալք ընդ սա՛ Գայիանեայք.
 ձեօք ՚ի խաւար՝ կռապաշտութեան,
 գտին զուղին՝ մերազնեայք.
 այժմ՝ խաւար՝ եգիպտական,
 կալաւ զաչս՝ հետեւոց.
 երկրպագեմք՝ ձեր նշխարաց,
 վարատեցէք՝ զայս մէգ ամպ:

ՄԺԱ

Մպարանջանք՝ բազկաց կուսին,
ականակապ՝ յօրինեալ.
Նունի Մանի՝ կուսանք ընտիր,
հայաստանեայց՝ թագ պայծառ.
այժմ որ կայք՝ միշտ ընդ կուսին,
պաղատեցէք՝ ընդ մերովք.
անհետ առնել՝ յազգէս մերմէ,
զատելու թիւն՝ ոխակալ:

ՄԺԲ

Կոկոնազարդ՝ Շուշան ազնիւ,
գուստր մեծին՝ Վարդանայ.
որ ուռգեալ՝ արեամբ ծնողիդ,
բուրիս ՚ի մեզ՝ այժմ հապայ.
այժմ նախանձ՝ ազգատեցաց,
շնչէ ՚ի սփիւռ՝ հոտ անարդ.
մի արգելուր՝ զհոտ քո անոյշ,
քո եմք թէ եմք՝ բացակայ:

ՄԺԳ

Հանդիսացեալ՝ ընդ կուսանաց,
ազնիւ տիկին՝ Մանուշակ.
որ առ ՚ի սէր՝ սուրբ հաւատոյ,
չարչարեցար՝ դժնդակ.
յարեան հեստեալք՝ ամբարհաւածք,
յամառ իբրև՝ զսալ դարբնաց.
ծանոն սոցա՝ զի ոչ գիտեն,
զգնաց իւրեանց՝ խոտորնակ:

ՄԺԴ

Թագազարդեայ՝ սուրբ Թագուհի,
անյաղթ վկայ՝ Բրիտանի,
որ ոչ պակաս՝ քան զՇուշան,
մատեար ընդ դէմ՝ իշխանի.
Թէև մեռար՝ ՚ի նմանէ,
այլ մահուամբ քով՝ փրկեցեր.
փրկեա՛ զազգ քո՝ յազգատեցաց,
յորոց անպարտ՝ չարչարի:

ՄԺԵ

Պարագլուխ՝ սրբոց պարուց,
Զարմանադուխտ՝ մեծ տիկին.
որ զերկերիւր՝ անյաղթ վկայս,
ձօնեցեր քե՛ւ՝ անմահին.
ուռ եմք և մեք՝ քո արմատոյն,
և ուռգիմք՝ ՚ի սուրբ Հարց.
այլ չեմք ազատ՝ յորդանց ճճեաց,
ազատարար՝ զքեզ ունիմք:

ՄԺԶ

Եառն մածեայ՝ լեառն պարարտ,
արարատեան՝ դաշտ ընտիր.
՚ի քեզ հաճեայ՝ էջ Միածին,
կառոյց զտաճար՝ շնորհաճիր.
այժմ որդիք՝ մօրդ լուսոյ,
են ձերբակալ՝ յայլում գիրկ.
վանեա՛ զնոսա՝ սուրբ գեղարդեամբ,
գուցէ կթեն՝ զայլ կաթիլ:

ՄԺԷ

Յաւել կացջիւր՝ յայդ վեհ Աթոռ,
 Ընտրեալ Յաջորդ՝ մեր Սուրբ Հօր.
 մեծդ Ներսէս՝ քահանայապետ,
 Գլուխ ազգիս՝ ընդհանուր.
 'ի քեզ անկաք՝ մեք յարդանդէ,
 պահեա՛ զմեզ՝ Սուրբ Աջով.
 զի գողք վարձկանք՝ յաւելան յոյժ,
 խլել զհօտ քո՝ բանաւոր:

ՄԺԸ

Սուրբ հայրապետք՝ օրբագումարք,
 'ի սուրբ ժողով՝ Նիկիոյ.
 որք վճռեցիք՝ Հոգւով սրբով,
 արարչակից՝ գոլ Արդւոյ.
 ընդ նոյն և մեք՝ դաւանեմք հարք,
 զի՞ բարբանջեն՝ հապա չարք.
 կարկեցուցէք՝ զլեզուս սոցին,
 չասել ինչ բան՝ զՀայկազնւոյ:

ՄԺԹ

Աստուածարեալ՝ սուրբ Հայրապետ:
 դումարեալքդ՝ յԵփեսոս.
 որք ուսուցիք՝ մեզ դաւանել,
 Աստուածածին՝ զմիշտ կոյս.
 երկրպագուք՝ եմք մեք նմա,
 հապա զի՛նչ այս՝ բարուրանք.
 պապանձեացին բերանք նոցին,
 ինդրուածովք՝ Տիրամօրս:


ՄԻ

Հանդիսադիրք՝ Սուրբ հայրապետք,
 սուրբ ժողովոյն՝ Բուզանդիոյ.
 որք հաստեցիք՝ փառակից գող,
 զՀոգի ընդ Հօր՝ և ընդ Որդւոյ.
 զայն օն անդր՝ ծանոյց մեր հայր,
 ուստի դատիմք՝ մոլորեալ.
 կշտամբեսլիք՝ զատելիս մեր,
 մինչ ցերք մաշին՝ նախանձու:

ՄԻԱ




Յաւարտ բանիս՝ քօղով մատչիմ,
 առ ընթերցօղսդ՝ ամենայն.
 ներողամիտ՝ հանդիսանալ,
 իմ աղաւաղ՝ գրութեան.
 եթէ գտցի՝ ՚ի գազախիս,
 փոքր ինչ կայծ՝ հաճելի.
 շնորհ մեծ է՝ թէ ընկալջիք,
 վասն իմ ալեաց՝ ծերութեան:





204

W. B.



6062

2013

